



Պրոֆ. Ա. ՏԵՐԵՍԵՐՅԱՆ

399

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XIX—XX դ. դ.

(աղագրված դասախոսություններ)
ձեռագրի իրավումբավ

ՊՐԱԿ III

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

891.99.09. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XIX-XX դ. (ՍՂԱԳՐՎԱԾ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ՏՏՁԳԱՀԱՆՑԻ 1282 թ.

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

I

Հովհաննես Թումանյանը գրականության պատմության ասպարեզ իջակ գրերե միաժամանակ Հովհաննես Հովհաննիսյանի հետ։ Բայց մեր ժողովրդի մեջ բանաստեղծն իր գրական բեմելի առաջին տարիներում շատ ավելի քիչ հողակ եր կայելում, քան Հովհաննես Հովհաննիսյանը։

Ինչով պետք ե բացատրել այս յերեվոյթը։ Մեր գրականության պատմության մեջ այս յերեվոյթը բացատրվել ե նրանով, վոր իբր թէ Հովհաննես Թումանյանի քնարն սկզբնական շրջանում ազգագրական թեքում ե ունեցել և այս թեքում պատճառով նա ավելի քիչ ուշադրություն ե գրավել։

Բայց պետք է ասել, վոր սա միակողմանի բացատրություն է։ Ֆիզուե, Թումանյանի մեծությունը նրա ժողովրդայնության մեջ է։ Մենք տեսնում ենք, վոր այս ժողովրդայնությունից կերպ շի նաև Հովհաննես Հովհաննիսյանը։ Մենք տեսնում ենք, վոր մեր այս յերկու բանաստեղծներկ ել ժողովրդին մոտիկ արվեստ են տալիս։

Այնուամենայնիվ Թումանյանի մատ վորոշ գեմոկրատական գաղափարներ շատ ավելի սուր ձեվով են դրված, շատ ակեր մարտական յեղանակով են բացահայտված։

ի հարդեն, Հովհաննեսիսանել դեկտ եր բորժուական
կարգերից, շարիկմիք : Նա յեւ Թումանյանի պես հանդիս
յեկայ քաղաքական ռեակցիոնի Տամանակ, շարիկմիք կա-
տաղի Հնջման շրջանուու: Իսկ այս հնջման դեմ Հովհան-
նեսիսի խոսքն այնքան էլ բացահայտ և սուր չեր, ինչպէս
զոր Թումանյանի խոսքը: Յեզ հենց այս պատճառով էլ հա-
կասէն բորժուական քննադատությունն աշխատես Թուման-
յանին և տվերի տակ թողնել:

Անդ վոզ միայն վոտանավորների մեջ, այս իր հրա-
պարագախոսական և քննադատական գրվածքներում Թու-
մանյանը քերան է հանդիսանում մեր Տողովրդի այն տար-
րերին, վորոնք խիստաբորեն Տառածում եյին բորժուակիայի
և շարիկմիք դեմ: Յեզ հենց այս յերեվուսիքի պատճառով
էլ մեր գրական քննադատության մեջ Հովհաննեսիսը
պաշտպանվում եր Տողովրդասեր քննադատների կողմից,
այնպիսի Տողովրդական գրողի հողմբոյ, ինչպիսին եր Պա-
պարոս Աղայանը:

Դապարոս Աղայանը Թումանյանի առաջին պաշտպաննե-
րից եր, նա վողջունեց Թումանյանի մուտքը՝ գրականության
մեջ և Շիրվանցադիքի հիշողությունները նկատի առնելով
պետք ասել, զոր Թումանյանը յեղել է Դապարոս Աղայանի-
սանը՝ գրական աշակերտը:

Այնուհետեւ այս պայքարը Թումանյանի շուրջը մեր
ամբողջ գրականության պատմության մեջ Տավալվել է: Թումա-
յանը յեղել է մի դեմք, վորին պետք եր կամ Գամակրել կամ
առել: Նրա նկատմամբ շեր կարելի անուարբեր լինել, վորով-
նետեվ նա հասարակական-քաղաքական խնդիրները շատ

պարզ եր գոտնում և պահանջվում եր, վոր քննադատը
կողմեռուցի կամ իր հետ լինի կամ իր գետ։ Յեզ, վերջու-
թես, Թումանյանը դատում է գետիկատական խաչերը
բրոշակակիրը, այսինքն այն խաչերի, վորով կյանք դուր
գալով՝ արդեն ակնեց եյթ պայքարել արդու անարդար կործա-
րի գետ։

Յեզ ահա հենց այդ Տարածակ Թումանյանին իր պաշտ-
պանության տակ և առնում այնպիսի մի խոզոր դժմք, ինչ-
պիսի և Սանկան Շետումյանը։

Ինչ ձեմերով եր ուզում բարժուական քննադատությու-
նը վարկարեկը Հովհաննես Թումանյանին։ Ինչ հիմնա-
կան դժուուցյուն կար նրա գետ։

Ամենից առաջ ուզում եյթ ցույց տալ, վոր Թուման-
յանը անցած գնացած կյանքը Մեծարողներից մեկնել; Նրա
մասին գրված ուսումնասիրություններ։ Մեկը վեճիպահը և
«Անցյալի Մեծարանք»։ Ցույց և արվում թե Հովհաննես
Թումանյանի դրվագները։ Կպատակ ունեն անցյալը Մեծարե-
լու։ աշխատում են նրան բնորոշեն իբրեւ նահապետական
կենցաղի յերգիլ։ «Ո Տարկե այսպես ասելով կամ գրելով՝
նրանք շեն ուզում հասկանալ ենոյն Թումանյանը մեծագոյն
ոճաւիրու և և առաջի և ճշմարտացի կերպով նահապետա-
կան կենցաղը, այդ կենցաղի բոլոր կողմերը։ Տաւով նա-
հապետական կենցաղն իր բոլոր կողմերով։ Տաւով թե Շե-
մարտում և, այլեվ քննադատում։ Հենց այն, վոր նա-
անցյալը վորոշ շափով ոթյեկարիստացնում և, տալով այդ
անցյալի թերև գետ կողմերը, մենք տեսնում ենք, վոր
նահապետական այս յերգիլ կողքանը խոսում և այդ նա-

հապետական կյանքի աղաղակող բացերի մասին։ Որինակ
աղաթի մասին։

Անուշի ամբողջ տրագեդիան հենց այս աղաթի ժե-
տեվանքով եւ տեղի ունենում։ Նա դեմ է անշափահասների
ամուսնությանը, որինակ Մարոյի ամուսնությանը։ Առ հա-
սարակ դեմ է կնոջ ստրկացմանը, շխոսկանությանը,
հարեմական կյանքին, և այլն, և այլն։ Իյս բոլորը Հով-
հանես Թումանյանը իիստ կերպով քննադատում են իր
Անիձած հարս» լեզենդի մեջ։

Իյս բոլորը չուցի, վոր Թումանյանին յեր-
բեք չի կարելի բնորոշել՝ կորպե, անցյալը մեծարող կամ
նահպետական կարգերի վեա սիրահարված բեկ։ Բայց,
ի հարկ ե, ամելի իիստ վերսբերմունք լիբերալ քննադա-
տությունը յուց տվեց այն համանակ, յերբ կամենում եր
ապացուցել, թե Թումանյանը մի անտարբեր պառնասական
յերգին ե, վոր կյանքի ցավերը, ուասությունները նկատում
ե վերին աստիճանի սառնասորու կերպով, միայն կողքին դի-
տելով։ Այդպիսի քննադատներից մեկն ե Լեռն, վորն աշ-
խատում ե յուց տալ թե Թումանյանի մոտ ընթերցողը չի
տեսնում վորելի դժգոհություն գյուղական կյանքից։

Հարկավ, այս կարծիքն ել հիմնականում սիսալ ե։
Թումանյանը բարձր արվեստագետ է, նա խոսում է գե-
ղարվեստական պատկերների միջոցով, նա խոսում ե իր
նշանավոր տիպերի լեզվով, նրան խորրի են մերկանդամ
ճիշերը։ Յեվ ահա հենց այս տեսակետից ել, պետք է ասենք,
վոր Թումանյանի բարձր արվեստը լիբերալ քննադատության
կողմից թերագնահատվել ե։ Նրա տիպերը բարձր փոր ու դիմ-

յական շեղագուցք ամպատի էն, մի-քա, լորձ ազ-
բառաւ և թերապւետի լիքու քենացառընչը :
Երա կրթական պատկանությունը համարվություն ունի, զոր
կար, ունեած նոր առաջ զգացնել և անդեմ զգին, զոր
թշու թէ նոր առաջ անշաքանչ ամբողջը ամեն կենցան
է, բայ առաջ անձնայությունը :

Եթե հանգամանքը, զոր համարվածը զոր և անմա-
րաս, սկսուր բանեց, որ համար անունն ու անուն-
ան հաշվածները բարեկար են անհամար զենքերի ու
դույմերի : Բայց, թէ հարկ է, թօսանակը լուծացնել և սե-
ղան և այդ բնորոշերու և այս նման և պահպատ
պահանջնեան մեջ ժաման խոր սեպայաներին : Տես
զոր Բայրութի առ զոր և անմար : Բայրութ կ լիբան և ան-
նունքան կունցաւ մի մեռուղութ եւ, ինչու հումանակ
առ հայր կամ կենց բաներ :

Թումանյանի մատ կոչ Ծերտ գիշաւոր հեռուները,
ամեն զար անցաւ առկրուցակերն, լեռքքքական հերունե-
րը, զորուք հանուն ին զարին մի քանի խորով, վերին
անտառնի վերանագրութ էն : Արքան - « Անուշ » - ի
մեջ հանդես է գալիս մի ծերունի : Կորը շատ քանչաղ,
զոր սահման կերպով և կիսալու և մեծ գանձարայաց նկա-
րագրութ է : զոր Անուշին փարսրին : Բայց մենաւու եք,
զոր այս ծերունի կենցանի մարդ է, չնայու թօսան-
յանը նու անունը չի ուսիր, այլ հանդես է բերու
պորտեա ծերունինին ընթացացնում, զորի մեջ յուրա-
քանչուուր Տեր կարու և զանել իր զեմքը :

Թումանյանի մատ ծերունին հրշեցնութ և Անուշ-

կյանի «Դեպուցի մեջ Գիքոն, վորը նույնպես բավական անվարժ լեզվով է խոսում, դժվարությամբ։ Իսկ Յերը շատ ավելի ռեալական է, քան վորելի շատ սահուն կերպով կիրախոփայող մի ուրիշ Յերունի. որինակ - Միրաքյանի «Եալվարի վորո» պոեմի մեջ մի Յերունի, շատ կիրախոփայական կերպով է խոսում և շատ սահուն լեզվով, բայց վերջի վերջու Թումանյանի այս Յերունին իր քշախոսությամբ, դժվարախոսությամբ շատ ավելի կենդանի յէ, քան Միրաքյանի պերճախոս Յերունին։

Աս չույց ե տալիս, վոր Թումանյանը վորպես խոչոր ենալիստ կարողանում է իր ու՝ պերը բարձրացնել բարձր կիրախոփայական սիմվոլիկ աստիճանին։

Բայց Հովհաննես Թումանյանի քննադատների մեջ ամենից կատաղին և Թումանյանի նկատմամբ Ժիտական վերաբերմունք չույց տվողը Հովհաննես Գնունին է, վորը ուստեղեն լեզվով մի ուսումնասիրություն է լուս ընծայել Նորագոյն հայ պոեյտայի մասին և Թումանյանի նկատմամբ վերին աստիճանի խստապահանջ է յեղել և անարդարացի։

Գնունին պնդում է, վոր Թումանյանի բոլոր պոեմաների մեջ, անխորի, բացակայում է ռեալ մարդը։ Նրա բոլոր հերոսներն, ասում ե Գնունին, շինձու մարդիկ են և բոլորն ել ասում և խոսութ են հեղինակի ոխտպաներով։

Մինչդեռ մենք գիտենք, վոր յերբ վոր Թումանյանն արդեն ուսումնասիրվում է գիտականորեն կամաց կամաց ի հայտ ե բերվում նրա տիպերի նկատմամբ, վորոնք վոր կյանքի մեջ գոյություն են ունեցել։ Յեթ տեսք հրա-

շուրջուներ գրող հեղինակներին հիշենք, վորոնք Թումանյանին մոտ են յեղել, նրանք արվեստադեսի կյանքը տալով և նրա կյանքին ըազ ճանոր լինելով՝ չուց են տալիս, վոր Թումանյանը իր բոլոր տիպերը մշակելու ժամանակունեցել ե այդ տիպերի նախատիպերը, այսինքն պրոտոտիպերը: Թումանյանը բազմաթիվ մարդկանց նկատի առելով, բոլորին մի հայտարարի յէ բերել և այդ բոլորի դձերն ընդհանրացրել մի տիպի մեջ, այսինքն Թումանյանն իր տիպերի վրա աշխատել է բոլոր խոշոր գրողների պես, վորոնք տիպի վրա աշխատում են այնպես, ինչպես արձանագործը արձանի վրա: Նախ նա անձերն ե ուսումնասրել, նրանց կյանքը հաշվի առել, նրանց պայքարը և այդ բոլորը ի մի բերելով՝ ստեղծել ե մի գեղարվեստական պորտրետ, վորն իբրեւ նիստ դարձել ե զատերի մեկը:

Անցյալում փորձ ե արվել բնորոշելու Թումանյանի ամբողջ ստեղծագործության ուզն ու ճոճը: Աշխատել են տալ՝ ինչպես կատեր Բելինսկին՝ Թումանյանի տաղանդի հիմնական պաֆուսը: Յերկու փորձ արժե հրշատակել: Կոազին փորձը կատարել է Փիլիպոս Վարդավարյանը, վորը Թումանյանին անվանել է «թախիճի յերգիչ» Յերկրորդ փորձն արել է Հեռն, լորր Թումանյանին անվանել է «լեռան յերգիչ»:

Դալով առաջին բնորոշմանը՝ պետք ե ասել հետեւյալը. Թախիճ կա Թումանյանի ստեղծագործության մեջ: Ինք Թումանյանը իր յերկերի ձողովաճուն բայ ե անում «նախերգանք» հատվածով, վորի մեջ իր թախիճի մեջությունն ե շեշտում: Թումանյանը պատմում է մի առակ Մոլա Նասրադինի առակներից, վորով ուզում ե իր թախիճուն լի-

Եթից առ առաջ է ու Անգլ առաջ է Թի պատճենը,
Հայութ ու անշարժ։ Եթով հայութ է թի Անգլ պատճեն
չեմ զնուի անդամութ, առաջ է, չեմ ուղարկուի կոր Հայութ
պատճեն անշարժ։ Եթով յեւ ու Թալիստան այս անշարժ պատճեն
էր։ Եթու անդամութ համար չեմ առաջ առաջ է թի Անգլ
պատճեն յերգի չեմ պատճեն յես առաջ առաջ է, թոյ անց-
նի մեր կյանքի այսուհետեւ, Եթով յես կորեն ուրախ յեր-
գիր ։ Բայց պարզ է ենու այս այսուհետեւ պատճեն իւս մշա-
տախու իւս, ուստի յեւ անշարժ ուրախ յերգի գրեց պատճեն։

Պարզ է առաջ, ոյս Թումանյանի իր Համաց երգի ։
Մեկի թի Փիլիպոս Ըստ այսուհետեւ այս բնորոշական օնդին
ուրախ այսուհետեւ գրական կոյն էր, զար Հայութայի այսուհետեւ
հիշու է առաջ, ոյս թի թի թարիքի յերգի է։ Խոյս և այ-
սու այս բնորոշ համաց երգ, մեզ թվուի է, զար այս ԲՇ-
Հորոցուն ւեմ չեմ, չի կարեն Թումանյանին ամբողջու-
թին թարիքի յերգի անվանելու։ Հիշու է երա այս թարիք
իւս, յերբ նու տախու է զյուղի ովքուր կյանքի Եկուրոցիուր
ըստ Միաժամանակ նա ունի բուռ սավաննայուն մեր
Ժողովուրդի ապագայի նկատմամբ։ Եեւ չի պահանջուս Ա. Հայու-
թի, կոյ Թումանյանի քշար անվանում է զգարդադիւն։

Դաշտ ու եռան յերգի ու բնորոշանք, պես է առեք
Տեսելուս ու զար ինչուի Թումանյանը մեր բնորոշուր կոյ-
գանցուրեւ կրա գրի տակ նոյ աշխարհը կեծունի զուու
է առաջ։ առաջին անգամ նոյ քրո մեր արտօն ու անցու-
տանք, մեր լեռն ու եռո զուեւ էն իրենց հոյսիքա պահ-
կերացուր, բայց և այնպէս. պայտ է Թումանյանին, միութ-
յան բնորոշ յերգի անվանելու։ ուս է, Միակողմանի բնորոշուր

Այս բնորոշումը հեռն տալիս է Թումանյանին, չուց տարու համար վոր լեռան նկարագրութեամբ նրան հաջողվում է, իսկ մարդու նկարագիրը չի հաջողվում վերջի վերջու այս գովասանքը բանաստեղծի համար դառնում է պարսավանք, վոր նա չի կարողանում բնության մեջ յեղած մարդուն նկարագրել, և յերգել այնպես, ինչպես վոր նա կա: Հեռի կարծիքով Թումանյանը բնության յերգիշ է, միայն իր ստեղծագործության առաջին շրջանում, յերբ նա / հեռյի կարծիքով / նկարագրում է գյուղը և գյուղապետն: Յեզ 1904թվին իր «Ռուսահայ գրականության» պատմության մեջ հեռն գրում է, վոր Թումանյանը հեռացել է բնությունից և գյուղից և դարձել է սենյակի բանաստեղծ, վոր հանգեր է հյուսում և վու թե ստեղծագործում:

Խետը չի ուզի, վոր այս կարծիքը սխալ է, վորովհետեւ հեռյի այս տողերը գրելուց հետո Թումանյանը տվել է մեր գրականության համար անմեռ գեղարվեստական գործեր. ինչպես որինակ՝ «Սասունցի Թավիթ»: Հեռյին, գլխավորապես, խիստ է յերգիծաբան Թումանյանը, վորը գրել է իր «Պոետնու մշաման» և շատ խիստ պատաժանել է հեռների քննադատությանը: Իսկ հեռն սրանից հետո «Գրականության պատմության» մեջ ըրանից վրեժ է լուծում, այնպես, ինչպես Փափազյանից, յերբ նա գրում է իր «Եմմա» վեպը:

Պետք է ասենք, վոր շիբերալ և մանր բուրժուական օննադատությունը թերագնահատում եյին նայել Հովհաննես Ցումանյանի լիրիկայի արժեքը: Հիրիկայի արժեքը թերագնադատվում է մի շատ անճիշտ տեսակետի պատճառով: Թումանյանին հիմնականում համարում են եպիկ. և վորովհետեւ

նա եսիկ բանաստեղծ եմ, սրանից յեղակացնում են, վոր
նա չի կարող լինել հաջող լիրիկ, իսկ մենք գրանք և
պնդում ենք, վոր թումանյանը բավմաժանը գրող ե:

Նրան միաժամանակ հաջողվել է վոր Միայն եպիկան,
այլև լիրիկան, գեղարվեստական արժակը, յերգիծաբառնո-
թյունը. Նույնիսկ նա քննադատության և հրապարակախո-
սության մեջ ել վորոշ արժեքներ և ատեղջել: Մանավանդ
նրա քննադատական հոդվածները ցույց են տալիս, վոր բա-
նաստեղջն ունեցել ե և զատ լորջ քննադատական տաղանդ,
և յեթե նրա այս ուղղությամբ ունեցած հոդվածներն առանձ-
նակի և առանձին գրքով հրատարակվի՝ այնպես, ինչպես
ուսուական գրականության մեջ կա «Պաշկինը-քննադատ»,
միկ մռու ել վերնագրվի «Թումանյանը-քննադատ», կը տես-
նենք, վոր բավական արօնեքավոր գործ են ներկայացնում այդ
հոդվածները:

Հասկապես պետք ե ասենք լիրիկայի մասին, թե՝ իմա-
տերն իրականությանը շեն համապատասխանում: Թումանյանը
մեր լավագույն լիրիկներից մեկն ե և վերջի մերդու նրա
այնպիսի վորանակուրոց, ինչպիսին ե «Համերդը» կամ
քառյակները, մեռչ են մեր լիրիկական բանաստեղջու-
թյան համար վորպես անգնահատելի բարձունքներ:

Հետո առաջի, կարեվոր է նկատել, թե ինչ ամերաբեր-
մունք ունեցավ բորժուական քննադատությունը. Թուման-
յանի մոռուցոց այնուհետեւ նկատմամբ՝ այսինքն նրա ստեղ-
ծագործության շնչին և վոգուն:

Նույնիսկ այս բաժինը, Թումանյանի մռու թերագնանալովնելի:
Թումանյանն իր բոլոր այս թերագնանալովներին պատա-

իսանել և մի ուժեղ և տաղանդավոր գործով-քննադատական
հոդվածով, վորի վերնադիրն է «Հայոց Դրամբյանիշմը և յնա».

Դրամբյան անոնով մի քննադատ աշխատել է կոյզ տակ,
վոր Թումանյանը մողովրդական ստեղծագործությունից ոգուր-
վել է կորոյքն. նա վերցնում է միայն բարբառով պատ-
մրվածքները, վերածում գրական լեզվի և այստեղ վորեւ
մշակում տեղի չունի: Այսինքն, ըստ Դրամբյանի, կարծէս
թե Թումանյանը մի խողովակ է, վորի միջով թագովում ե-
ժողովրդական անգիր բանաստեղծությունը: Ըստ Նրան՝ Թու-
մանյանը գրավում է մի շատ կրավորական և յերկրորդա-
կան, յերրորդական բանաստեղծի տեղ:

Թումանյանը շատ հաջող պատասխանել է Դրամբյանին,
վոր ինքը նախքան վորեւ մողովրդական յերկ գրականի
վերածելը՝ ձեռքի տակ ունենում է այդ յերկի մի շարք վա-
րիանտները և գրելուց առաջ այդ վարիանտները, ինչպես
հարկն է, հետազոտում է, ուսումնասիրում, մշակում: Թու-
մանյանը ասում է. «Յես մի ծտի մասին հեթիաթ գրելու հա-
մար հարյուր հեթիաթներից եմ ոգտվում: Յես շատ զգուշ
եմ յեղել իմ ծտի վերաբերյալ, իսկ իմ քննադատները
այսպիսի զգուշություն ել շեն հանդես թնրում իմ վերա-
բերյալ. յես մի ծտի շատը ել նրանց համար արժեք չունեմ»:

Նոյն թերագնահատումը ցոյց է տվել և հեվոն Ման-
կելյանը և Սասունցի Դավթի «վերաբերյալ: Նա ասում է,
վոր. «Սասունցի Դավթիթը» վարիանտներից մեկի թարգմա-
նությունն է: Բայց մենք գիտենք, վոր, Թումանյանը վոչ
թե մի վարիանտ է ձեռքի տակ ունեցել այլ շորս վարիանտ
և, վերջապես, կարենորն այստեղ վոչ թե վարիանտներն

էլ. այն թե իր ամբողջ գիտությունը, հմտությունը, ժողովրդական եպոսի վերաբերյալ, վոշ միայն հայկական այլ ոտար ինչպես եւ իսպաս դնում իր այս գործը կատարելու համար.

Յեշ այս պատճառով եւ, վոր նա տվել է մի շտեսնված գեղարվեստական գործ, մի գործ, վորեւ իր գրական արժեքի տեսակետից մեր գրականության համար հավերժական կապիտալ եւ հանդիսանում:

Այս բոլորը կույց եւ տալիս, վոր հետյա այն կարծիքը թե Թումանյանը զյուղից հեռացել եւ դարձել կաբինետային յերգիչ, բոլորովին շի համապատասխանում իրականությանը: Վոշ մի կաբինետային բանաստեղծը շեր կարող գրել «Սասունցի Դավիթ»-ը: Նույնպես սխալ եւ մողովորդի թշնամիներից մեկի այն պնդումը, թե Թումանյանի ստեղծագործությունը վերելք եւ ապրել մինչև 1903 թիվը, վոր այնուհետեւ նկատվում եւ նրա տաղանդի վայրեջիքը:

Բոլոր այս քննադատներին Թումանյանը պատասխանել է մի շատ սրամիտ արտահայտությամբ: Նա այսոթիվ իր նամակներից մեկի մեջ գրում է, վոր «Յես այժմ ավելի շատ զննելով եմ վբաղված, քան գրելով»: Նա սրանով իր քննադատներին հարկադրում եւ կույց եւ տալիս թե ինքն ինչքան խստապահանջ եւ գրական գործի վերաբերյալ. շատ գրելու պահանջը, վոր վոմանք դնում եյին նրա առաջ՝ նա մերժում եւ, կույց եւ տալիս, վոր գրականության պատմության համար վորաց եւ կարեվոր, քան քանակը և սրանով նա իրագործում եւ ընկ. Հենինէ այն հայտնի պահանջը, վոր ասում եւ «Քիչ բայց լավ»: 1903 թվին, յերբ Թումանյանը հրատարակեց իր «Յերկերի մողովածու»-ն, «Մշակը» այդ առթիվ գրեց մի հոգ-

լած-ռեցեպտիա և ռեցեպտնոն այս միտքը հայտնեց, վոր
իբրև 25 տարվա պրոդուկյուրա այս գործը քանակով շատ
փոքր է: Յեթ այս միտքն արտահայտեց այն ժամանակ, յերբ
հայ դպրոցի մատաղ սերունդը սովորում եր այդ գործերի
վրա հայերեն, Հիշու-այնպես, ինչպես Մի ժամանակ այդ սեր-
ունդը սովորեւ Պակարոս Աղայանի «Այսրենի լեզուառերու»:

Տումանյանը 1903 թվին հրատարակության տվեց Եթր
գրականության համար այնպիսի մի գեղարվեստական ան-
դեմունատելի գործ, վորև այլևս անհնար է վորենի փոքր-
խության յենթարկել, վոևետ տող ջնջել, վորովհետեւ Թուման-
յանը հասել էր իր զարպետության գաղաթնակետին: Յեթ
վերջի վերջո 1903 թվին Թումանյանը մի կանգնած սեմու-
թյուն շմնաց և հետագայում տվեց նոր և նոր արժեքավոր
գործեր: Յեկ Մինչ դեռ Թումանյանի քննադատներից շատերը
այսոր Ըոռապված են, Թումանյանը ընդհանառակը մեր նոր սե-
րունդի համար հայ ամենախոշոր կլասիկն է մնում:

Հիշու է, նա համաշխարհային պատճերազմի ժամանակ վո-
րով տատանումներ ունեցավ և այս կապսուկությամբ հրատա-
րակեց «Հայրենիքին հետ» իր յերկերի Տողովաձուն, բայց
և այնպիս պետք է ասենք, վոր նա ընդհանուր առաջնորդ հա-
վատարիմ մնաց իր դեմոկրատական գաղափարներին, և կարող
եր իր բոլոր քննադատներին ասել Դանտեյի հայտնի խոսքը
թե՝ «Գնա քո հանապարհով և թող ասեն, ինչ վոր ուշում են».

Հովհաննես Թումանյանը խիստապահ գնահատվեց խորհրդա-
րին դարաշրջանում: Դպետք է զարմանալ, վոր առաջին հե-
ղինակը վոր մեր Շնորհարատը տվեց Տողովուրդի ձեռքը՝ սա

Հովհաննես Թումանյանն էր:

Թումանյանի յերկերի հրատարակությունն առաջինն էր, վոր Պետքատը ձեռնարկում էր: Այնուհետեւ պետք ասենք, վոր խորհրդային դպրոցների համար Թումանյանի յերկերը ծառայել են իբրեւ լավագույն ուսումնական նյութեր: Բժ մեծերը և թե փքրերն ուրախությամբ սովորում են Թումանյանի ընտիր վոտանավործերն ու հոդվածները:

Խորհրդային թատրոնը ևս, մանավանդ Պատանի հանդիսատեսի թատրոնը շատ մեծ շափով ոգտագործում է Թումանյանի գրական ժառանգությունը: Ծովնը և խորհրդային ույերան, վորը տվել է Թումանյանի կլասիկական գործերը:

Խորհրդային կինոն Թումանյանի գործերը ժողովրդականացրել են, նոյնիսկ եստրադայի համեմատաբար Թումանյանն ավելի շատ և ոգտագործվում, քան մի այլ գրող:

Յեզ վերջապես պետք է հայտնել, վոր Թումանյանը մեկ համար մի անպիսի հեղինակ է, վորի ակադեմիական հրատարակությանը ձեռնարկել են Գրականության և Պատմության ինստիտուտը:

Այս բոլորն իսկապես Թումանյանին դարձնում են մեր ամենանշանավոր ժողովրդական գրողը: Թումանյանի ուսումնասիրության մեջ ամենահմանականը նրա քաղաքական, հասարակական գործի խնդիրն է:

Կայսմ մենք կանցնենք այս խնդրին:

II

Թումանյանն իրեն պարզապես հակադրել է Գամառ

Քաթիբային, ինչպես և Շահապիսին։ Նա գրել է, վոր այս յերկու հեղինակների գործերի մեջ նա շի առնում մեր արտ ու անդաստանի հուսն ու զունը - դրանով նա ուզում է ասել, վոր հայ ժողովրդական կյանքը և հայ գյուղացու և աշխատավորների տնտեսակառ քաղաքական և կուլտուրական ինդիրները հարապատորեն ինքն է պատկերացնում։ Մեր բնությունը և մեր ժողովորդի կյանքն ասում է Թումանյանը «առաջին անգամ իմ յերկրի մեջ են հանդես յեկել»։

Յեկ իսկապես Թումանյանի գործերի մեջ առանձնապես ակնբախ է քայլայվող գյուղացու դրության նկարագրությունը և նրա բանվոր դառնալու վիճակը։ Ընդհանրապես վոշ միայն գյուղացիների, այչև սրա հետ միասին աշխատավոր խավերի տառապագին վիճակը, բուրժուացիայի և պարիկմի որով, նա տվել է վերին աստիճանի ռեալիստորեն։

Թումանյանը ինքը ևս անձամբ ապրել է ծանր տնտեսական դրություն։ Նրա կենսագրությունից մենք գիտենք, վոր նա նոյնիսկ մի կտոր հայ ունենալու համար ծառայության և մտել այնպիսի մի տեղ, վորը ամբողջովին վոշինչ շի տվել վոշ միայն նրա մտքին, այլև սրտին։ Որինակ՝ նա ծառայել է հոգեվոր կռնչուստորիայում և այստեղ նա իրեն զգացել է իբրեւ կղերի վրա նատաօ։

Նամակներից մեկի մեջ խոստովանելում է, վոր կոնսիստորիայում յետ առենքի հետ վատ հ. աբեղության մեջ եմ։ Յետ իմ ճառայակիցներին շեմ հասկանում, նրանք նույն շեմ հասկանում։ Յեկ այս ծանր վիճակը նա ապրում եր վորով հետեւ բազմանդամ ընտանիքի տեր եր և անհրաժեշտ եր ընտանիքը պահել։

Մենք գիտենք, զոր «Պոետ ու Ծոսան» պոեմը այնքան հարճական յենթարկվել բուրժուական մամուլի կողմից. այդ պոետի վիճակը թուժանյան ապրել է իր կյանքում. Թուժանյանին համարել են անաշխատ, աշխատանքի անընդունակ, նրա բանաստեղծ լինելը համարել են պարապություն. այս պոեմայում, յերբ հարցում են թե ինչով են պարապել, ասում են՝ բանաստեղծ եմ յեղել, ասում են՝ «դե ասա պարապ եմ յեղել, եիր»:

Նույնպես և թուժանյանը բուրժուական խմբագիրների կողմից յենթարկվել են անտեղի սրբագրությունների: Նա տարել է իր լավագույն վոտանակորը խմբագրի մոտ: Իսկ խմբագիրը թուժանյանի գրկածքերից դուրս են բերել. Մի անպետք բան: Նոյնին են յեղել թուժանյանի գրությունը, Նա անտեղի հաղաձվել և խմբագիրների կողմից: Թուժանյանն ել զգացել են փողի կարիքը և նա յել փողի քսակի աւենակարողությունը վող թե գրքերի մեջ են կարդացել. այլ իր սեփական կաշու վրա յեղացաւել: Բայց շատ անգամ այս տնտեսական նեղ վիճակի պատճառով հարկադրման են յեղել լուել, վորպեսպի. պահի իր բակմանդամ ընտանիքը: Որինակ՝ մենք գիտենք: Վոր. Ծահապիկին նա չեր հավաեռմ, բայց ստիպված են յեղել Ծահապիկի գրական փոնդից թօշակ վերցնել: Յեւ ի պատիվ թուժանյանի պետք են հայտնել, զոր նրա տնտեսական վիճակը, ընդհանուր առողջութ, իւշպես և շակոր Պարոնյանը՝ նրա տնտեսական համարական զծին շի վնասել և նա մնացել են հետեւղական դեմոկրատ:

Տոլստոյի կինը, Անֆրու Անդրեյվինան, մի բնորոշութ տվել իր ամուսում մասին, վորը շատ սակական է նաև Թու-

անյանին։ Արքիա Անդրեյեվնան Տումանյանի բնորոշը եւ այս
պես «Հոգով գյուղացի, մտքով ինտելիգենտ»։ Այս բնորո-
շումը ճիշտ եւ զու մրայն Թումանյանի գեղարվեստական գոր-
ծընի նկատմամբ, այլև նրա հրապարակախոսական, քաղա-
քական գործերի նկատմամբ։ Որինակ՝ վերցնենք նրա 1894
թվի գրած մի հոդվածը, վորը Կոռուս կատարած իր
ճանապարհորդության նկարագիրն եւ։

Այս հոդվածի մեջ Թումանյանը շատ զերմ կերպով
պաշտպանում է գյուղացիության շահերը և միաժամա-
նակ նա, ցարիկմի Ծի տակ, բուրժուացիայի տիրապետու-
թյան տակ հեծող գյուղացիության վորոշ կակասություն-
ներն իբրև գյուղացի ինտելիգենտ շատ խիստ կերպով նը-
կատում եւ։

Այս հոդվածի սկզբում Թումանյանը գրել է մի շատ
բնորոշ մուտտո։ «Այս հետ յերկրից յես լսում եմ ուրախ
ծիծառ լայի հետ»։ Այս բնորոշման մեջ հասարակայնո-
րեն իրար հակադրում են ծիծառող և լայ լինողները։
Ինչպես Պուշկինն իրաԵրկրումի ճանապարհորդության «
մերկացնում եւ ցարիկմի քաղաքականությունը,
այնպես ել Թումանյանը շատ խիստ կերպով մերկաց-
նում եւ ցարիկմը, ինչպես և նրա համբարկներին։ Նոյ-
տալիս եւ այն դժոխային վիճակը, վորի մեջ գտնվել եւ հայ
քավառը իրրե ցարական գաղութ։

Ինչպես Պուշկինն իր յերկերի մեջ, այնպես ել Թուման-
յանն իր այս հրապարակախոսական հոդվածի մեջ մերկա-
ցնում եւ ցարիկմը, բուրժուացիայի շահատակությունները,
պատմում եւ ճանր հարկերի մասին, պատմում եւ պաշտո-

նյաների կաշուակերության մասին, տալիս է ըրուապիտ-
թյան լոյսի կարու լինելը, այն նախամանքը, վոր պար-
իկմբ գյուղապիությանը տգիտության սեն է պահում իր
շահառտակություններն անարդեւք դարձնելու համար :

Տալիս է վաշխառության այնպիսի պայտուն նկարու-
թիր, ինչպիսին տվել է Մուրացանն իրանուաքրավ՝ վեպիսեց:

Բայց ակելի խիստ կերպով թումանյանը տալիս է
կալվաճատիրություն գննադատությունը և այս բառում
նա իր ուսուցիչ Հազարոս Աղայանի ընկերն է։ Ինչպես
վոր Պավարոս Աղայանն իր «Յերկու քույր» վեպի մեջ
քննադատում է կալվաճատերերին - թափառներին, այն-
պես ել այս նույն թափառների, կալվաճատերերի քննա-
դատությունն է տալիս Հովհաննես Թումանյանը «Հառա-
շանք» պոեմում գեղարվեստական անմեռ պատկերների մի-
ջոցով։ Թումանյանն իր ճամբորդական նոթերի մեջ անմեղ
նկարագրի ձեվով իսկապես գյուղապիությանը կոչ է անում
ընդպկել, ապստամբվել։ Իբր թե Յերմոլովի ժամանակ գյու-
ղապիութերն ստիպված են յեղել ընդպկել տիրապետողների
գետ և այս պատմական յերեվույթով, նա, սկզբարայի պայ-
մաններում, անց է կացնում իր միտքը՝ կոչ է անում ընդպկել.
և նա իբր թե հեռավոր անսյալի մասին է պատմում, բայց
ընթերցողին հասկացնում է, վոր դրությունը ծանր է և այսոր
վոր ձեր նախնիքների պես «դուք ել միք լոի»։ Թումանյանն
ակելի թունավոր վերաբերմունք և չույց տալիս դեպի բուր-
ժուական մամուլը, այսպես որինակ՝ նա շատ խիստ վոճով
է խոսում բուրժուական որդան «Մշակի» մասին, և պար-
մանալի չե։ Թուրժուական մամուլը նրան նկատմամբ բացա-

հայտ թշնաման դիրք ե բանել:

Թումանյանը բուրժուական մամուլին մեղադրում է նախ և առաջ այն բանի համար, վոր գավառական կյանքը, գյուղացու գրությունը, նրա քաղաքական, սննդեսական, սուցիական պայմաններն այդ մամուլը բարձի թող ե արել. Վոր այս մամուլն զբաղված է տերտերների, հոգաբարձուների դրությամբ: Յեվ այս գաղակակությամբ նա մի շատ բընորոշ ակնարկ ե անում, առում ե « Անգլիական պառամենտի - Գլատստոնի ընտրությամբ մամուլը շատ ավելի յե հետաքրքրվում, քան մեր ժողովրդով »:

Թումանյանի այս ակնարկը խիստ վիրավորում է մշակականներին, հատկապես նրանցից մեկին, վորը գրել եր մի մեծ գիրք անգլիական պարլամենտի Քլադստոնի մասին:

Թումանյանն այն գրողներից է, վորը վոչ միայն հոգվաճների մեջ ե ծառանում բուրժուազիայի և շարիկմի դեմ, այլ և իր առողյա գործունեությամբ շատ խոշոր գեր է կատարել Անգրեգանուայան հասարակական կյանքում, հատկապես հայերի և Աղրբեզանցիների, հայերի և վրացիների փոխհարաբերությունները լավացնելու դուժում: Որինակի համար անհրաժեշտ է հիշատակել նրա խռովազարար գերը հայ թուրքական ընդհարումների ժամանակ. Մինչդեռ հայ բուրժուազիայի ղեկավարներն աշխատում ենին այս կոհմը բորբոքել, հրանրել զարգացնել: Թումանյանը քարոզում եր, վոր յեղբայրակից ժողովուրդները պետք ե իրար հետ հաշտ լինեն, վոր նրանց անհաշտությունից ոգտվում ե շարիկմը:

Նոյնպես և մեր հարեւան վրացի ժողովրդի և նրա գործիչների հետ Թումանյանը միշտ լեզու յե գտնվ. հայո-

նի յե նրա բարձր կարծիքը վրապահան գրականության մասին
Շոթա - Առաջադաշտութելու մասին։ Հայունի յե, վոր Հովհաննես Թու-
մանյանի գրական գործերի մեջ հայր և վրացին հանդես են շա-
լիս ձեռք ձեռքի տված։ Յեկ հասկանալի յե, վոր այս բուրքից
հետո Հովհաննես Թումանյանն ինչպիսի՞ խանդավառությամբ
վողջունեց խորհրդայնացումն՝ Անդրկովկասում։

Հովհաննես Թումանյանն առաջիններից մեկն եր, վոր
վողջունեց Խորհրդային հշխանության հաստատումն Անդրկով-
կասում և մինչև իր կյանքի վերջը մնաց Խորհրդային հշ-
խանության բարեկամը։ Թօբիլիսիում նա հիմնադրեց հայ որ-
վեստի տունը և հենց իր առաջին յելույթի մեջ ցույց տր-
վեց, վոր նոր իրականությունը բերում է արվեստի Տաղ-
կում և հեղինակների կյանքի ապահովություն։ Նա շեշտեց,
վոր Խորհրդային հշխանությունն Անդրկովկասում ստեղծեց
ազգամիջյան խաղաղություն և աշխատավոր ժողովրդին հր-
նարավորություն տվեց իր խաղաղ աշխատանքով պարապելու։

Դաշնակցական ավանդուրայի ժամանակ Հովհաննես Թու-
մանյանը դատապարտեց այդ ավանդուրան և անարդ սյու-
նին գամեց այս ավանդուրայի հրաճրիշներին։ Այդ ժա-
մանակին նրա հրատարակած գործերի մեջ նշանավոր է
նրա «Սովոր վատթար» նոդվածը, վորի մեջ նա այն կար-
ծիքն է հայտնում, թե Խորհրդային հշխանությունը ժամա-
նակավոր դմվարություններ ունի, բայց վերջի վերջու նրա
հաշթանակն անսասան է։

Հետո շատ նշանակալիք է նաև նրա կարծիքը մուրճի
և մանգաղի մասին, առհասարակ խորհրդային դրոշակի
մասին։ Մուրճնու մանգաղը, սա նշանակում է աշխատանքի

թագավորություն, աշխատանքի իշխանություն և զա այն
խորհրդանշանշ ե, վոր հիմնականում տարբերվում է խոր-
հրդային իրավակարգը բոլորական հասարակակարգից:

Ինչոք բացառութել Հովհաննես Թումանյանի այս
լուծում վերաբերմունքը դեպի Խորհրդային իշխանությունը:
Ամենից առաջ Նրանով, վոր Հովհաննես Թումանյանը
ժողովրդական քանաստեղծ ե և գիտեր վոր Խորհրդային
իշխանությունը բերում ե ժողովրդի համար բարորություն:
Նրա նախահեղափոխական ստեղծագործությունների մեջ
պարզ կերպով յերեվում ե Նրա վերաբերմունքը դեպի իշ-
խանության գաղափարը, Նրա վերաբերմունքը դեպի բոլոր-
ական տիրապետությունը և դեպի ցարիկությունը:

Այդ կողմից շատ նշանավոր է Նրա «Թագավորն ու
չարչին» յերկը, վորի մեջ նա այն միտքն ե հայտնում
թեու կա բռնություն, այնտեղ զի կարող լինել ազատ խոսք:
Թումանյանի վերաբերմունքը դեպի իշխանությունը, վորն
արտահայտել ե այս գործի մեջ, քննադատներիկ վունեց
տեղիք ե ավել ստածել, վոր նա անարխիա ե:

Այս տեսակետը միանգամայն սխալ ե: Թումանյանը
ժողովրդական իշխանությանը կողմնակից ե և թշնամի
շահակործող իշխանությանը: «Չարի վերջը» գործի մեջ
նա պաշտպանում է հավասարության պաղափարը այն
հայտնի լոկունգը գործածելով, վոր ասում ե «Սարե ամեն-
քիս ե հավասար»: Ընդհանուրապես վորոշելով իր վերա-
բերմունքը դեպի իշխանությունը, կոնկրետ կերպով թու-
մանյանը զնահատում ե ցարիկությունը իբրեւ իշխանության
վատթարագոյն ձեվ: Այս բանը նա հոյակապ կերպով գոել

և «Հառաշանք» շավարտած պոեմայի մեջ։ Այստեղ նա տալիս է չքավորի ըմբուտացումը տիրող կարգների դեմ, քննագառում և պարիզմի պաշտպանած հողային, ագրարային պայմանները և խիստ քննադատում պարական բյուրոկրատիային և նրա արդարադատությունը։

Ինչպես Դավարոս Աղայյանը «Յերկու քույր» վեսի մօլ այնպես ել Թումանյանը խիստ քննադատության և յենթարկում թաշատներին, իբրեւ հողատիրական մի կարգ։ Չատինը և չատինիկամբ հանդիս ե դավիս, վորացն չքավոր գյուղացիության ըմբուտացման քարոզ։ Այս յերկի ռեալական լինելու գյուղավոր հանգամանքն այնէ, վոր Թումանյանն այստեղ հանրագումարի յժ բերում իր բոլոր անզեկությունները հայ գյուղացիության ընդվզումների Բոսբնի հատկապես եռու գյուղացիության ըմբուտացումը պարիզմի և կալվածատիրության դեմ։ Վոչ միայն իր կրուցներում և գեղարվեստական գործերի մեջ, այլև իր հրապարակախոսական հոգվածներում Թումանյանը շնչառում է Խողովրդի մօլ մեղած վորոշ բարոյական արատներ, համարելով այն վաստարագույն տիրապետության արգասիք։ «Դառնացած Խողովրդը ա վերնագրով մի հրապարակախոսական աշխատության մեջ նա հայտնում է այն գաղափարք, վոր կորս ավաճ վարունգը դառը կլինի։ Այնպես վոր յեթէ մեր ժողովրդի մեջ վորոշ դառնություն կա, սա արդյունքէ այն շահագործման և բանության, վոր այս ժողովրդի նկատմանը։ Դայտնաբերել են տիրապետողները, և ուրեմն Խողովրդի բնության մեջ ել Բողել են նրանք հոգի կողմէն։ Հետաքրքիր է նկատել, վոր նման մի կարձիք ել հայ ժողովրդի մա-

սին արտահայտել ե Բայրութ, ամսով թե՝ այդ ժողովորդն ինչ լավ կողմեն ունի իրենն ե, վաս կողմերը, ինաւկությունները առքամբ ետության արգասիք են:

Եսու բնորոշ ե նաև Թումանյանի վերաբերմունքը դժու զարդարությունը՝ 1905 թ. հեղափոխության ժամանակ: Այս կողմից նա ազգամիջյան խաղաղություն եր քարոզում է. իրականության մեջ աշխատում եր այս խաղաղությունն իրականացնել: Մյուս կողմից թե իր հոգվածների մեջ և թե իր բանավոր պրոցեսների մեջ աշխատում եր ցույց տալ, վոր զարդարությունների մոզովորդներին իրար դեմ և լարում, իր զանը փրկեցու համար:

1906 թվի ամառը, հեղափոխության վերելքի ժամանակ, Թբիլիսի ժողովրդական տանը Թումանյանը իրադայ մի դասախոսություն, վորն ամրող զապէս ուղղված եր միայնության դեմ: Այս դասախոսության մեջ նա վարկաբեկում է զարական վուտիկանությանը, ճաղրում ցենզուրան և ցույց է տալիս զարական բյուրոկրատիայի անձագրամբը աշխատությունը: Առաջ է թե՝ կենարունական իշխանությունը պավուտական վուտիկանությանը. և մի հարցում և անում, թե ինչ գրության մեջ է չափակի ֆլորան և ֆանտազիան: Կոստիկանությունը պատասխանում է այդ անուններով յերկու թեթենվորիկ աղջրիներ կային այստեղ և նրանք արդեն շվել են:

Վոր միայն իր դասախոսության մեջ, հրապարակախոսաւունական հոգվածների մեջ, այլ և հենց ժողովրդից առաջ ֆուլկորային Հյութերի մեջ Թումանյանն աւանդ ինքան է վարկաթեթել տիրող հաւարակակարգը, նոյնին

իր պոեմն պատահեկան հասակում գրված « Ծուռն ու կատուր » մեջ նա Յառանում է կառապարության գեմ՝ բատարանը և դիվանքաշուն դուրս է բերում վոչ իբրև հշմարտության Ներկայակուցիչներ:

Այդ բոլորից հետո հետաքրքրական է իմանալ թե վորն է Հովհաննես Թումանյանի սոցիալական ուսուցիչան, վորն է Նրա համար այն իդեալական աշխարհը, վորագույն նա կուզեր ապրել: Անատոլ Վրանյան գտնում է, վոր սա հեղինակի համար ամենաբնորոշ հանգստմանքն է, թե նա վոր աշխարհում կուզեր ապրել: Դա յեւ վորոշում է հեղինակի քաղաքական դիմագիծը:

Յենկորական պայմանները Նկատի առնելով՝ Թումանյանն իր քաղաքական իդեալը մարմնապրել է շատ ավելի իր հեքիաթների մեջ, վորած ժանտաստիկ կերպով. բայց շափական ու եալիստական ձեվով տալիս է կյանքը: Այս կողմից շատ հետաքրքրական է նրա « Հոսկե քաղաքը » վորը միշտ է մարգմանական հեքյած է, բայց միաժամանակ տալիս է նրա բոլոր հեքյածների մեջ տիրապետող քաղաքական, հասարակական տենդենցների ցայտոն սինթեզը:

Բայց այս հեքյածի մեջ ավելի բնորոշ է Թումանյանի սոցիալական ուսուցիչան: Նա Ներկայակում է մի քաղաք, որ մարդիկ յերջանիկ են, այսինքն նրանք տեր են իրենց աշխատանքին, ազատ են և չուցում են տալիս, վոր այս ազատությունը և այս յերջանկությունը պայմանավորված են նրանք, վոր այդ քաղաքում վոչ թե վոսկերն է իշխում, այլ սերն ու յեղբայրությունը:

Իր ինքնուրույն գործերի մեջ եւ որինակ « Հազարան-

թիւու և վերնագիր կրող տեքյաթում, վորը դժբախտաւար կրստ է թողել՝ նա տվել է իր սոցիալական բաղնամքների մարմառակումը։ Այստեղ պատկերացնում է այն, վոր Ալան արքայի, ացսինքն, ճնշովրդի պարտեզը փշոտ է դարձել, իսկ պահապանները չար աթթեր։ Իմաստունները խորհուրդ են տալիս, վոր «Հազարան թլրույիր-ին բերեն այս պարտեզը նորեն ծաշկեցնելու համար։ Ամենամեծ դժվարություններից հետո ծերունին ճանապարհ է ցույց տալիս Ալան արքայի փոքր վորդուն, Արեգին, վոր նա զնա և «Հազարան թլրույին բերի. յերեսի նա կ'զնա և կը հաղթի դժվարություններն ու կը բնորի։

Այստեղ եւ յերեսում է բանաստեղծի դժգոհությունը սրբող իրավակարգից և այստեղ, տիրապետող փշերը, արջերը, ասել չի ուզի վոր իրական մարդիկ են և իրական հանգամանքներ, վորոնցից բանաստեղծը դժգոհ է և սոցիալական բողոքում է այս բոլորի գեմ և նև գարմանող միջոցներ և առաջադրում։

Մի խուօսվ, յեթե ամփոփելու լինենք Թումանյանի հասարակական, քաղաքական հայեցողությունը՝ պետք է ասենք, վոր այս հայեցողության վովնաշարը Ֆողովրդայնությունն է։ Թումանյանը Ֆողովրդի մեջ տեսնում է ակատության և ճշմարտության սերը. ոյս Ֆողովրդի հոգեկան աշխարհի. հարստություններն եւ վեր հանում և զարմանում այս հարստությունների պրա։ Նա ցույց է տալիս Ֆողովրդական ստեղծագործությունները, Ֆողովրդի հանձնարեղությունը, և նրա կատարյալ արվեստագետ լինելը, ոյն հանգամանքը, վոր ամեն իշարդ խնդիր, բարդ փիլիսոփայական պրոբլեմներ Ֆողովր-

գըն այնքան կոնկրետ և ուսուցիչ չե չուցացրում։
Թումանյանի մեջությունն այն է, վոր նա բարձրանուած
է աշխարհին և կյանքին ժողովրդի աշխերով նայելու բար-
ձունքին։ Ինչպես է որտահայտվել այս ժողովրդայն ությունը
Թումանյանի ստեղծագործությանների մեջ, վոր նա բանեցրել
է լիրիկա, եպոս, գեղարվեստական արձակ։
Խոսենք նրա լիրիկայի մասին։ Թումանյանն իբրև լիրիկ։

III

Ինչպես ասեցինք քիչ առաջ թերագնահանութել և Թուման-
յանի լիրիկան նայ քննադատական գրականության մեջ։ Եպիկ ,
լիրիկ Թումանյանին իրար հակադրելով՝ աշխատում են չույս
տալ, վոր նորի Թումանյանը լիրիկ չե, այլ եպիկ և լիերիզոր-
որդ նրա լիրիկական բանաստեղծություններն ուժեղ չեն։
Աշխատում են չույս տալ, վոր Թումանյանն ավելի պատմող և
նկարագրող է և այս բաժնում նու հաջողակ է լիրիկի իր զգաց-
մունքների աշխարհը, առհասարակ լիրիկմը նրա մոտ թույլ է
Այս կարծիքն առաջին անգամ արտահայտել ե Լեյն
Մանվելյանը, և այնուհետեւ նրան հետեւել են մյուսները։
Այս կարծիքն այն սրայ տեսակետից է բայցում, վոր լուրացած-
շյուր մի բանաստեղծի վերաբրում երին մի վորոշ ժանրը։
Ստեղծագործություն։ և լեթե մի ժանրի մեջ բանաստեղծն ուժեղ
է համարում երին այս ժանրը նրա համար։ Հատկանշական և
լեթե մյուս ժանրի զնով նա աշխատում է, պնդում երին, վոր
այդ բնագավառում նա չի կարող հասնել իր հատկանշական
ժանրին։

Այս տեսակետը սրայ է. լեթե հենց նկատի առնենք

նախ Թումանյանի պրոդուկցիան և ապա համարխար հայրին
դրականության մեջ տեղ գտած մի շարք բանաստեղծներ :
մորոնք Միամամանակ և եպիք են յեղել և լիրիկ : Արա ա-
մենացայտուն որինակը կարող է հանդիսանալ Պուշկինը :

Է եռ իր « Թումանյայ գրականության պատմության »
մեջ աշխատում ե կոչոց տալ , վոր Թումանյանն ինքնուրույն շե-
իր քնարական յերդի մեջ , « Նրա քնարական յերգերը մուրա-
ծո յեն , իսկ բանաստեղծի սիրո յերգենը , - ասում ե՝ Հայու
ձեռքով են գրված » : Այս կարծիքը հիմնականում սիսաւ ե և
վորեվե քննադատության շի դիմանում : Թումանյանն իբրև
լիրիկ մեր գրականության մեջ նոր խոսք ե ասել և այս խոսքը
նրա լիրիկայի բարձր ժողովրդայնություննեւ : Հենց սիրո յեր-
գերի մեջ , վոր նրա ամենահաջող կողմն են համարել Թումա-
յանն իր սերը յերգում ծ ժողովրդական քնարի վոզով . այդուես
և նա իր « Մոռացված սեր » վոտանավորի մեջ : Սիրածին մո-
ռանալու հետո բանաստեղծը մի համեմատություն ե անում ,
վորով կոչոց ե տալիս իր սիրո մաքրությունը , չենությունը »

Այսմ վորպես վազուց մեռած բարեկամի հրշատակ
կամ մանկության որով սիրած մի հին յեղոր յեղանակ :

Յեզ անոնց այսմ աշխիս ել նոզյակ շեմ անվանում ,

Չեմ աշխատում քոն մոռելիս , վոր գեղ ունանեմ յերապում ...

Այսմն մոռացված սիրո պատկերացման մեջ բանաստեղծն
անում ե այնպիսի համեմատություն , վոր ժողովրդական ստեղ-
ծագործության մեջ , ժողովրդական խոսքու վրացի մեջ շատ
գործածական ե : Նույնը պետք ե ասել նայել բանաստեղծի
քաղաքական պոեսիայի մասին : Այստեղ եւ բանաստեղծը
տողորված ե իր ստեղծագործության ժողովրդայնությամբ :

Բրինակ՝ Նրա աւշին որ հություն » վոտանավորը . վորը գրել է
գրեթե պատանեկանին համակա՞մ՝ կործ և աճում այշպիսի հոյո-
նի խոսքեր . ինչպիսին եւ նայեք յերեխեք բայց մեզ պես չայրե-
սա մի շատ համարձակ քաղաքական բողոք և տիրոջ կարգերի
դեմ : Մի սույնալական դժգոհություն , վորով թումանյանը բը-
նորոշում ե իր դարը և այնուհետեւ հավատարիմ և մնում իր
այդ սկզբնական յերկի հիմնական քաղաքական տենդենցիան :

Նույնիսկ բնության յերգին թումանյանի համար քնորոշ
և ժողովրդայնությունը : Այդ կողմից գլուխ գործոց ե Նրա «Հա-
մերգը» :

Ինչպես Յերունին , ձենով պառաված ,
Ճայնակում ե միր թոռնիկի յերգին
Այնպես ել Յերուկ անտառը կամաց ,
Արձագանք տալի զրի աղմուկին :

Բայց ի հարկե թումանյանի լիրիկայի հիմնական բովան-
դակությունը սա ժողովրդի կյանքն ե , աշխատավոր ժողովրդի
առորյան : Գրելով իր հուշահավոր պարոգիան՝ Հովհաննես Հով-
հաննիսյանի « իմ հայրենիքը տեսել ես , ասա » վոտանավորի
գեմ , թումանյանը միանգամայն վորոշում ե իր ժիտական
վերաբերմունքը գեսի զյուշակու սույնական և քաղաքա-
կան դրությունը :

Թումանյանը վոշ միայն նկարագրում է գեղարվեստո-
րեն գյուղակիության վիճակը , այլեւ նա իր պոեսիան
գյուղ մտցրեց . ժողովրդի ստացանը նա ժողովրդին տվեց
կատարյալ մշակումով և ժողովուրեց բանաւեղին մշակումը
յուրաքանչյան վորապես հարապատ ստեղծագործություն : Գյուղակու-
թյան կյանքը նկարագրված վոտանավորների մեջ աշքի յեն

բնկնում և Գութանի լերզըց, «Թօվար տարիս ուր շատ սեռս
կերպով Թում Այս տալիս է հայ գյուղակիության սովորա-
կան տրադիուրիան»:

Այդունք Քայքայվող գյուղակիությունը հանդիս է զարիս
իր թշուակ կացությամբ՝ մի կազմիկ պարագեր, վաղիառուսկան
կապիտալի շահատակիություններ գյուղոմ, մյուս կողմիկ տե-
րության հարկերը, այսինքն չոչոյ և տալիս կալվածատիրության
անխոսափելի կոռը և բերյարը և վերզակն բորժուակիայի
դասակարգային հիմնարկներիկ մեկը՝ յեկեղեցներ, վորը Յակոս
և Թանգ դնուի այդ “ոյն գյուղակուն իր Ֆիսակատարությունը”:

Թումանյանի վլուանավորների Տեղ պետք է նշել մի
ներքողական, վորը նա նոյնիք է Պերճ Պռոշյանին՝ նրա գրա-
կան, գործունելության քառասունմյա նորելյանի առիթով։
Ազատեց նա, ինչպես և Հովհաննես Հովհաննիսյանը՝ գովու
և Պերճ Պռոշյանին այն բանի համար, վոր նա մեր գյու-
ղակիության ցավերի արտահայտիչն է հանդիսակել և այս
ցավերն արտահայտել է իր բարձր գեղարվեստական գրչուն։
Թումանյանը գրում է և եյն ցավերին լեկու տվիր ու խոսեցիր
ամեն պրոռումց, ուրիմն Թումանյանի կարծիքով Եղիձակի
ամենամեծ արժանիքն այն է, վոր նա կարողանում է իր գործը
զարձնել Խողովրդի սեփականությունը։ «Ամեն պրոռում տնը ու-
նեալ ու ահա Թումանյանի իդեալը»։

Թումանյանի սկզբանական գործերի մեջ պարզորոց կերպով
նկարագրված է աշխատավոր Խողովրդի աղաղակող շահագոր-
ծումը տիրապետողների կողմիկ։ Եկա շահագործումն առաջ է
բերում աշխատավոր Խողովրդի մեջ սոցիալական բողոքի առ-
կայությունն։ Իր «Կանչ» վլուանավորի մեջ բանաստեղծը գը-
ալու աշխատավոր կամ բանաստեղծը գը-
ալու աշխատավոր կամ բանաստեղծը գը-

բուժե և թե զու շդիտն, վոր այստեղ յերկրում, մարդը մպահ
րես մարդ ե գիշառում» և այսպիսով բանաստեղծի նպատակն
է դառնում մերկացնել գիշատիչներն, որոնք նրանց յերեսի
դիմակը:

Ինչպես Հովհաննիսյանը այնպես ել Հովհաննես Թու-
մանյանը յերգել է պանդխտությունը, իբրև ճողովրդական
կյանքի ամենատեօն շարիդ: Անբուժ թռչնի միմակը նրանք
համարում են բնորոշ պանդխտի համար: «Գաղթականի յերգ»-ի
մեջ նա տալիս է անտանըող աշխատավորի հոգեկան ծանր արագե-
դիան: Նա պանդխտությունը համեմատում է տեղին շարժված
և գլորվող մի քարի հետ:

Ինչպես ուսա բանաստեղծ կերմոնովն, այնպես ել Հով-
հաննես Թումանյանը խոսելով իր ծամանակակից սերնդի մասին՝
և Վատ որեր» վոտանավորի մեջ՝ նա դժգոհ է իր այդ ծամա-
նակակից սերնդիկ: «Ծանր հեծության ժամանակների և Յըն-
զումների անկազմա վորդի»: Տեսնում ենք, վոր այդ սերնդի դեմ
գրել է նաև Հովհաննես Հովհաննիսյանը՝ իր «Տղմուտ» վոտա-
նավորի մեջ:

Թումանյանը խոսում է այս սերնդի անտարբերության մասին
և ուզում է այս անտարբերությունը պատճել, ուզում է վրեժ
շուծել: այնպես յերգել, վոր սիրտը պատռվի թափի դուրս:

Թումանյանն ունի նաև վորոշ հայրենասիրական յերգեր:
Այդ յերգերի հիմնական հատկանիշն այն է, վոր սրանց մեջ
չկա թթու նացիոնալիզմ, շավինիզմ: Այդ իմաստով Թումանյանը
հենց սկսրիկ հակադրվել է Գամառ Քաթիպային: Նրա սկսբնական
հայրենասիրական յերգներն ազրեարվ չեն: Նա տաճկահայ ծողու-
վողի վիճակը յերգում է այնպես, ինչպես և ուսահայ ճողովը-

Դի պիճակը : Կարենցումն թշվառներին և բողոքում տիրապետոց-ների անարդար չթյան դեմ . այս վոգով ե գրված նրա « Յերկրու» և «Տակ» վոտանավորները :

Ասեսինք, վոր Թումանյանի մասին գրողները նրան անվանել են թախի՞ն յերգիւ : Վեազ ե ասենք, վոր Թումանյանի լիրիկայի մեջ այդ թախին մասամբ տռկա յէ : Հեզ որինակ նրա « Յօր-գերի Նախերզանքը » եր յերգերը կա՛ իր վշտերը բանաս-տեղնը մեծության կողմից համեմատու՞ է մեր սարերի հետ, իսկ խորության կողմից մեր ձուերի հետ : « Յերկար գիշերներ» վոտանավորի մեջ բանաստեղնը առլիս և տիրուր ներկայի նկարա-գիրը . պատկերացնում ե կյանքի Ֆակ հոդսերը , բայց այդ տիրու-թյան հետ միասին կա նաև լավատեսություն սպագայի նկատ-մամբ :

Հետեվապես սխալ չի Վ. Բրյուսովը , վորը Թումանյանի ջնարը վորակում ե իբրև վվարթագիւն :

Թումանյանի լիրիկայի մեջ հատուկ տեղ են բռնում նրա յերգի ճաբանական վոտանավորները : Այս վոտանավորների մեջ հանդես ե գալիս Թումանյանի լիրիկայի մի վորոշ կողմուն-այդ այն ե , վոր նրա ստեղծագործության մեջ իշխող տիրու-թյան և ուրախության մոմենտներ այստեղ իրայ հետ միա-նում են : Նա Ֆիմաղում ե միաժամանակ լաց և լինում : Կամ ինչպես Գոգուն ե ասում , նա Ֆիմաղը արցունքի միջով ե անց կացնում : Նույն միտքը արտահայտել ե նաև Բայրոնը . Ֆիմաղում եմ , վորպեսպի լաց շլինեմ :

Հետո վոտանավորների մեջ Թումանյանը հետեւում է Պարոնյանի պուշտնքին Պարոնյան ասում ե և պակա-սության վրա լալը ամենամեծ պակասություններ : Ուրեմն

պետք է առկառությունը Ֆիւղի միջնորդ Բագրատին: Այս ձեզով Թումանյանի իրուիան առանում է չորոշ արտգրգական կերպարանք:

Այս է Ֆազրել Թումանյանը և ինչպես է Ֆազրել:

Ամենից առաջ նրա Ֆազրել Մեջ կա յերկու է ուս, իրան աններող Թումանյուր Ֆազր, վորը նա բանեցն է հայ ճողովորդի թշնամիների նկատմամբ՝ առաջին Տօրին նրա մոտ Ֆազրկան է բործուակիան, այնուհետեւ նա խիստ Ֆազրել է նաև Շոգեվորականներին և Հակեղեցին, վորը դարձնէ բործուակիայի դասակարգային հիմնարկը: Բայց նա ունի և Գամենատաբար Մեղմ Ֆազր: Այս Ֆազրը նա բանեցնում է բործուակիայի տիրապետության վոհերի նկատմամբ, տվյալ ու պատճեն հայ շամուկատական գրողների վիճակը կապահանջման որոք մայդ յերկու տեսակ Ֆազրի ել բերենք, մի քանի նման ներ:

Թումանյանը Ֆազրում է բորժուական մամուլը, այս մամուլի մշտական թեմատիկան և չույս է տալիս, վոր Ճողովորդի կյանքի Մեջ յեղան Գրատապ Խնդիրները Բազան բորժուական հայ մամուլը միաշար տերտերների և Շոգաբարձուների խնդրու է պաղպան:

Մենք քիւտենք, վոր, Թումանյանը բորժուական հայ մամուլը Ֆազրել է վոչ միայն վուանակործերի Մեջ, այլև իր արձակ, Գրապարակախոսական գրվածքների Մեջ: Այսուեղ նա չույս է տալիս, վոր բորժուական մամուլը հայ կյանքի խնդիրներով Քիշ է պաղպան և յետ պաղպան է՝ շատ մակերեսային մուտքում է չույս տվել:

Այսուհետեւ հարուստների նկատմամբ նա իր Ֆազրը

խորացնում է «Կոտակ» վուտանապորի մեջ, վորոտեղ չույս
ե տալիս, թէ ինչպես իր ամբողջ Կյանքում առնվտուր
անող և խարող առեվտրականը նոյնի և իր վերջին շունչը
դրվելու ժողովական էլ առնվտուր և անում՝ այս դեպքում նա
առեվտուր և անում իր աստծո հետ:

Այսուհետեւ շատ բնորոշ է Թումանյանի ձաղը ու-
րողների նյոթափառ վիճակի նկատմամբ: «Յերազագիրք»
Տաղրական վուտանապորի մեջ նա հայ գրողներին խորհուրդ է
տալիս թողնել իրենց ստեղծագործությունը և յերազանց Հ-
րատարակել: Ուրժուական հրատարակչական ընկերություն-
նիւ Վյաշելավ Իվանովը շի պահպանել գրվածքի
հիմնական յերանգավորումը , կոլորիսը :

« Թմկաբերդի առումը » թումանյանի յերկրորդ հա-
յուղած պատճառական պոեմներից է : Այստեղ նրա
նկարագրական տաղանդը , պատկերացնելու կարողու-
թյունը , լեզվական պատճմունքը և տաղաղափական
վարպետությունը հասել են իրենց գագաթնակետին :

Մեր գրականության մնայուն նջերն են կապ-
մում բերդի և նազիր շահի նկարագիրը , թաքու-
մի քաջությունը , խնջուքի կենդանությունը և այլն :
Վալերիս Բրյուսիլովն իրավունք ունի ասելու . թէ

թուանցանը ամել է այս կատարի Եղիշեացքարան.
 Արև գործերից մեջ զատ ամելի քան կարող ենց
 առարկել, քան թե շատ-շատ պատմագիրերի գոր-
 ծերին: Առ Տի զատ բարձր գովազնանք է, վոր մարդ-
 ուկանի կամարկն ամել է Բայլզակի նկատմամբ, թե նա
 գործերն իր դարաշրջանի համար շատ ամելի նորու-
 թե տալիս է քան յէտ շատ-շատ պատմագիրերի գործերը:
 Հաւերի Բրյուսովի այս կարծիքը հիմնականու-
 թերթում է քննադիտատեսական գրականության մեջ առ-
 յանձնում այս անհիմն պետքություն: Թե ճումանցանը չի
 կարողացել մարդկային տիպեր կերպել, վոր նրա տառ
 շենքերը, բնությունն ամելի շատ են, աշքը ընկում,
 քան մարդիկ և գործիչները: Այս կարծիքը միանցա-
 նան սիալ է, վորովհետեւ հօտմանցանն իր պահպասխ-
 նեղ ապել է անհան տիպեր: Նա կարողացել է մարդ-
 կանց դիմել իրենց սոցիալական բնորոշության մեջ:
 Նա իրականության ճանաշողությունն ամել է մարդկանց
 համար հանդիսանում են հասարակության իմացունե-
 ցիցուներ: Նա կարողացել է հմատ կերպով, մանկա-
 վարժական պրիմեներ ոգուագործելով: Իր իշեղութիւն-
 անպիսացնել: Յերբ կարդում ենք նրա չ պեմաները,
 թվում է, թե այսամուս է շատ հասարակ, առորյա-
 քաներ, բայց այս պարզությունը հանհարի պարզու-
 թյուն է: Նրա տիպերը ուսումնասիրելով, մենք սովո-
 րում ենք: Գործ ենք չենք բերում և մեր գոր-
 ծություններն մեջ ամելի հեռատես և զգաստ ենք
 մենք:

Յերե կոմանք կարծում էն, վոր նրա տիպերի մեջ միայն մի հատկություն է շեշտված, սա յել թերություն չպետք է համարել, որինակ՝ յեվրոպական գրականության մեջ հայտնի յէ, վոր Մոլիեռի՝ Հարպագոնի մեջ մի հատկություն խիստ շեշտված է, դա նրա մշատությունն է։ Մարքսը ցույց է տալիս, վոր սա դարաշրջանի համար վերին աստիճանի բնորոշ է յեղել, վոր կապիտալի նախնական կուտակման շրջանում կապիտալի կուտակումը հանդես է բերել ճայրահեղ հակումներ, և, վոր այդ մշատության առանձնահատկությունը յուրահանուկ եր այդ դարաշրջանի կյանքին։ Այնպես վոր Թումանյանի տիպերը մեղադրել սխեմատիզմի մեջ, սխալ ե, շատ թյուր կերպով են ըմբռնում այդ տիպերը։

Թումանյանի տիպերից անհրաժեշտ է հիշատակել Տետևյալները. նախ «Հառաշանք»-ի Յերունին, վերին աստիճանի կենդանի գծագրված մի տիպ է և ընթերցողի առաջ նա հանդեն է գալիս իր արտաքին և ներքին առանձնահատկություններով, շատ կոնկրետ կերպով։ Նրա խոսելու, զրոյելու յեղանակը, նրա կենդանի դիալոգը, վորն այնքան հագեցված է դրամատիզմով։ Գյուղակու քաղաքական և տնտեսական վիճակը պատճերվել են նրա խոսքերի մեջ և այն ընդվզումը, այն կատաղությունը, վոր կա նրա մեջ, վոր նա արտահայտում է գյուղակու թշնամիների մասի խոսելիս, ասելով - «Եօ, մի խոսեցնի, աստված կը-սիրես; թէ շե մի զաշը կդառնամ յես ել» - այս

բոլորը թումանյանը տվել է այնպես, վոր մեր հր-
շողության մեջ մնում է պեղմ, մնայուն ձեվով:

Յերկրորդ տիպը սա Մարոն է. Մեր գրականո-
թյան մեջ, դժբախտաբար, մանկական տիպերը՝ շատ
քիչ են. ի. Տենը ասել է, վոր շատ դժվար է մանու-
կի տիպը կերտել: Թումանյանին վերին աստիճանի
հաջողվել է այս մանուկի՝ Մարոյի տիպը կերտել,
վորին ամուսնացնում են աժդանա Կարոյի հետ և
վորը վոշինչ չի հասկանում և վոր մի տեղեկո-
թյուն չունի այն պարտականության մասին, վոր
փաթաթում են նրա-վիրն: «Մարոն» կերտված ե
այդ պոեմայի մեջ իր վոճով, իր մտքերի նայի-
վությամբ իբրեւ կին մանուկ: Յեզ այն կարծիքը
թե «Մարոյի» նկարագրության մեջ թումանյանն ան-
տարբեր մի գիտող է, սա միանգամայն անճիշտ-
քննադատություն չե: Թումանյանի իրականությունը
տալիս է ճշտությամբ և դրա հետ միասին հեղի-
նակն իբրև մի խիստ դատախազ է հանդես գալիս
Թումանյանն գեղջկական կյանքի թերությունները
դատապարտում են վոր թե մեծարում, ինչպես ա-
սել ենք նրա մասին: Դեռք է հրշատակել նաև Ձե-
նով Ոհանի տիպը, վորը մեկ կատարյալ ոպորտու-
նիստ է: Այստեղ ել գուք տեսնում եք, թե ինչպես
բանաստեղծը կարողացել է կենդանացնել այնպիսի
մի մարդու հոգեբանությունը, վորն իր հանգիստը,
իր անխռով կյանքն ամեն բանից բարձր է դա-
սում: «Թող տանեն կանայք, թող տանեն վուկի»,

Բայց իր հանգիստը չխռովեն։ Յեզ շատ բնորոշ ե
այն դեպքը, վոր յերբ Դավիթը Մելիքի թրի
տակից չի անցնում, նրան բրդող անցկացնողը հեն
այս ոպորտունիստն եր։

Իր մեծարժեք պոեմաների նշանակությունը
Թումանյանը բարձրացրել է նրանով, վոր այստեղ
ել, ինչպես և լիրիկայի մեջ, նա հանդես է յե-
կել վորպես ժողովրդական բանաստեղծ և նրա
ստեղծագործության հիմքը կազմում է ժողովրդայնու-
թյունը։

Պոեմաների մեջ այս ժողովրդայնությունն ինչ
գծերով է հանդես բերվում։ Առաջին հերթին
պետք է հրշատակել ուսալիկմը. ուսալիկմի հետ
պետք է հրշատակել նրա լավատեսությունը՝ ոպոր-
միկմը։ Թումանյանն այստեղ պոեմայի մեջ հան-
դես է գալիս վորպես ազատասեր։ Ամեն անգամ,
յերբ վոր խոսք է լինում ազատության մասին,
նա ինքն իր հերոսի հետ միասին այրվում է
բարձր խանդավառությամբ։

Այնուհետև պետք է հրշատակել նաև նրա
պոեմաների լեզվական կողմը, նաև սրանց մեջ
ճաշալված յումբրի զարգացումը։ Այս բոլոր գծերով
Թումանյանը կապված է ժողովրդական ստեղծագոր-
ծության հետ։ Ժողովրդական ստեղծագործական
ժառանգությունը հմտորեն ոգտագործելով, նույն
այդ ժողովրդին է տվել կամարկ գործեր և, զար-
մանալի չե, վոր այսոր Թումանյանը կենդանի

Եթե մեր Կիւոյի համար, թե խորհրդային թատրոնի համար, և թե հայութերայի, ասմունքի տերեկոյի համար և այլն։ Այս բոլորը չուցու են տալիս, վոր Թումանյանն այն կլասիկներից է, զորի գործերը խոշոր արձագանք են գտել հետագա սերնդի մեջ։

Գեղեցն ասում են, վոր «հանճարը՝ միտքը և գործ բեղմնավորելու հաստկություն եւ նաև հետագա սերունդների համար», իսկ մենք տեսնու ենք, վոր Թումանյանը նույնիսկ խորհրդային դպրոցի համար տալիս եւ անպիսի գործեր, վոր մանկավարժական տեսակետից լավագույն նյութ են հանդիսանում մեր դպրոցների համար։

Այս անցնելիք Թումանյանի ստեղծագործության մի նոր բաժնին՝ նրա գեղարվեստական արձակին։

V

Թումանյանն իր արձակ գործերով տվել է հայ բարձր գեղարվեստական պրովայի նմուշներ, ինչպես նրա լիրիկայի և պոեմայի մեջ, այնպես ել այսօնություն, հաղթանակ։ Թումանյանի ռեալիզմը, ժողովրդայնությունը ։ Գեմոկրատական հեռանկարները։ Թումանյանի լնուն արձակի մեջ կատարյալ հաղթանակ եւ տարել, այնպես վոր, նա, ինչպես և Պուշկինը, պրովայի մեջ մնում են իրենց

այլ Տանրերին հակառարակոր հեղինակներ:

Առաջ քննադատներից մեկը Պուշկինի համար ասել է. «Պաշտին և Որօն – Պաշտին»: Նույնը կարելի յէ ասել Թումանյանի մասին: Թումանյանն արձակի մեջ ել մեռմ է Թումանյան: Կոչ Միայն գեղարվեստական արձակի այլև առհասարակ Թումանյանի արձակը զայ ուստեղի յէ: Որինակ՝ Արա նամակները, ուստեղիպատճերը:

Պուշկինն իր նամակներն անվանելու պատճեն պրոպեր: Նույնը կարելի յէ ասել Թումանյանի նամակների մասին, մոր նա այնպէս է մշակել, ինչպէս իր գեղարվեստական արձակ գործերը: Թումանյանը իբրև արձակադիր զայ խոշոր նվաճումներ է արել: Կոչ Միայն նա հանդիս է յեկել վորոյն արվեստի գլուխացաւ, ոչը զիանության այլ և այլ թյուղերի գննադատ, ինչպես լեզվաբանության, աշխարհագրության, կոմիսարքիության և այլն:

Վորոնեժ՝ են Թումանյանի արձակի առանձնահատկությունները: !

Կարե յեթէ ասելու լինենք՝ նա այնունց հանդիս է զայիս վորոյն «Խոսքի սանձահարազարդութեաննիստան» իր աշուղից պահանջում է «արտի խոսքեր»:

«Արտի խոսք Ենք ուզում քեզքից,

Վոր մեր Տանի մեր Գոզին»:

Թումանյանի ոճնու մէջությունը հենց այս սրտի խոսքէ է: Մեր սկսակներն այսոր խորհրդա-

շին պարողները, պետք է Թումանյանից սովորեն այս
«սրժի խոսքը»: Պուշկինը գեղարվեստական արձակի
առանձնահատկություններ ամփոփել է յերեք հետում՝
այս պահանջում է արձակից նախ՝ Ըշտոթուն,
ապա պարզություն և վերջապես՝ կարճություն:
Պուշկինը ծաղրանքով առում է. «Կան գրողներ,
վարոնք շեն ուզում կարծ կերպով բայթեկամ ասել,
առում են՝ սույն սրբազն զգացնոնքը, վորի
ավնիվ բոյը . . . և այլն»:

Թումանյանի պրոզայի լեզուն սահուն է,
ազատ և շարժուն, հարուստ և միաժամանակ՝
ճիշտ: Նա դիտե մեր բարբառները և շատ հա-
մարձակ կերպով ոգտվում է վոչ միայն բարբա-
ռի գանձարանից, այլև՝ գրաբառից, ուսար լեզու-
ներից և այլն: Նա իրաստ կերպով քննադատել է
մի գավառական բառարանի մեջ յեղած սխալնե-
րը և ցույց է տվել, վոր այս բառարանի հե-
ղինակը մեր գավառաբարբառը լավ շգիտե:

Լեզվի այս գերազանց առանձնահատկություն-
նը Թումանյանին դարձրել է դպրոցական քանաս-
տեղնձը և մեր լազմակույն մանկական գրողը:
Լավ մանկական գրող լինելու համար անհրաժեշտ
է լինել խոշոր գրող: Հենց այսպիս է Թուման-
յանը, վորի մասնիշական գրականության առանձնա-
հատկությունները հետեւյալներն են. Նրա մանուկ-
ների համար գրքամքները շատ մեծ հաճույքով
կարդում են նույն տարիքավորները: Նրա մանկական

Հայործերի Այութը զող մրայն մանոկների կյանքից է
առնվաճ, այլև մեծերի կյանքից: Այս բաժնում
նա հետեւել է Բելինսկուն, վորո պահանջում է մա-
նուկներին տալ նույն մեծերի համար զրկան գոր-
ծերը և բարյ հասուկ մշակումով:

Թումանյանն ուսումնասիրել է մանոկների
ընթերցանությունը և այս մշակել է իր համար
այս ընթերցանությունը զեկավարելու կանոնները:
Նա ուշադիր հետեւել է, թէ մանոկներե ինչ են
սիրում և ինչպես են կարգում և այս փաստերից
ոգտվելով, զրել է իր կլասսիկ մանկական գործերը:
Նա այս մանկական ստեղծագործությունը հիշեց-
նում է մեզ խոշոր մանկական կլասսիկ Հայարաս
Աղայանին:

Մաքսիմ Գորկին իր «Ամանկություն» Նշանավոր
կենսագրական վեպի մեջ տալիս է, թէ ինչպես իր
տատը զեկավարել է Նրա մանկական տարիների զար-
գացումը: Բույր բարդ խնդիրները Նրա տատը բացա-
սրում է թությունից առաջ որինակներով, նույնիսկ
սեռական կյանքի մասին տառը տվել է Մաքսիմ
Գորկուն Նմուշ Ճաղիկների կյանքից, որինակ բեր-
լով, թէ «Ժամանակից շուրջ ճաղկին շպետք ենելք
առ, հոտը և անսքը կդիշանան:

Թումանյանի գեղարվեստական արձակի մեջ
հիմնական պրոբլեմներից մեկը մեր զյուղացիության
քայլայիման պատկերացումն է: Այդ քայլայիման
պատկերացումը Թումանյանը տալիս է մի կողմից

մերկացնելով տնտեսական, մյուս կողմից՝ քաղաքական շարժառիթները։ Որինակ՝ նա պետք է ԽԵՂԱՆԸ» պատմվածքի մեջ մերկացնում և անդրիովկապահույաց գյուղակության թշվառություններից մեկը։

Յարը տարրեկան 4000 յերիտասարդ և տանում հայերից և լինում իր զորանոցները և նրանց դարձում բարոյական ու մտավոր հաշմանդաշներ։

«Քեզի ԽԵՂԱՆԸ»-ի տղային տանում են պինդոր, չափում ե քաղաք՝ նրան փրկելու, բայց չի հաջողվում։ Առհասարակ շահագործման պատերազմը և այդ շահագործման պատերազմի համար յեզած պատրաստությունը Թումանյանը խիստ կերպով քննադատել է իր «Սասունցի Դավիթի» մեջ։ Դավիթն իր արտասանած նշանավոր ճառով, վոր աշխատավորական ժ անվանում Ալ. Մարտունին, ըմբուռտանում է թալանշիական՝ պատերազմի դեմ։ Սա մի նշանավոր ճառ է՝ խաղաղ աշխատող մարդկանց մըտայնությունը, վորտեղ դրվատում ե աշխատավորության միասնական շահերն ընդդեմ շահագործողների։

Նրա «Ահմեգ» պատմվածքի մեջ յերեվում է Թումանյանի ստեղծագործության մի այլ կողմը, մինչդեռ աշգայնական բանաստեղծները մեր հարեան ժողովորդների նկատմամբ թշնամություն նն քարոզել, Թումանյանն իր այս նշանավոր պատմվածքի մեջ ապօռ թուրքին դարձնում է հայ տան հարազատներից մեկը։

«Գաբր բիեռ զերամապահությունը» - պատմ-

լուծքի մեջ Թումանյանը շոշափել է մի թեմա, վոր հայ գյուղական գուսկանության մեջ շատ է շոշափվել : Բայց Թումանյանը տվել է խնդրին ինքնուրույն մոտեցում և մշակում : Ազապյանն իր գործերի մեջ տվել է մնու ռեալիստ գյուղացիների վորոշ անհավատությունը դեպի այն տուրբուտներ - ինտելիգենտները, վորոնք գյուղը չեն ճանաչում, գյուղի կյանքով շնոր ապրում, բայց շատ սիրում են գյուղի մասին գրել : Յնիւ արտպիսով աշխատավոր գյուղացուն քիչ են ոգուտ տալիս :

Ուսուցիչն առնասարակ գյուղ ե մտել հաճախ իբրև պաշտոնյա և գյուղացին, բայի վնասից այլ բան չի տեսնել նրանից : Հետո շատ բնորոշ ե «իմ ընկեր նետոն» - Թումանյանի աշխարհայացի տեսանկյունով : Մեր հանճարեղ աշուղ Սայաթ Նովան ասում է «գիր սիրե, զալամ սիրե, դավթար սիրե», Թումանյանը շատ խոշոր արժեք ե տալիս այն բանին, վոր գյուղը կրթվի, վոր գյուղացին աշքը բայ անի, տեսնի իր շարն ու բարին : Կրթությունն իբրև կենք գյուղացիությանը շատ և շատ շարիքներից կարող ե ակառնել :

Այս նյութը մեր բանաստեղծն Ալեքսանդր Ծատուրյանը վերցրել և գրել է սպանչելի «Դիր» վուանավորը :

«Յերկաթուղու շինոթյունը» պատմվածքի մեջ Թումանյանը դրվատում է բնությունը և հիմնականում նույն գաղափարն է արձարձում, ինչ վոր իր

քառակուրի մեջ: Յեզ վերջ ի վերջո Առաք-
յանի գեղարվեստական արևակի վրայի զործոցն է
«Գիքոր»:

Սուազին անգամ բանաստեղծ Ավետիք Խաչա-
կյանը շատ ճիշտ կերպով գնահատել է «Գիքոր»:
Խաչակյանն ասում է. «Կարծես ինքը Գիքորն է
խոսում և գրում իր մասին և զոյ թումանյանը»:
Սա նշանակում է, վոր թումանյանը կարողացել է
Գիքորի տրագեդիան դարձնել բարձր գեղարվեստական
արժեք: «Գիքոր»-ը ամենից առաջ կյանքից առ-
նվազ մի փաստաթուղթ է և ցույց ետալիս հայ
գյուղացիության ծանր անտեսական դրությունը ցած-
րվմի որոք:

Հայ գյուղացու անծայրաձիր թշվառությունը,
մի գյուղացի, վորն ստիպված է կյանքի հարվածնե-
րի տակ իր յերեխային, վորը հավիկ 12 տարեկան
է, իր խաղոնկերներից կտրել, անջատել, քաղաք ու-
ղարկել՝ աշխատելու համար: Սա նշանակում է, վոր գյու-
ղացին, ինչպես և խեղդվողը՝ բռնում են վերջին ծե-
ղից, շատ լավ համոզված լինելով, վոր այս ծեղը
նոյնպես կորուստից չի փրկի:

«Գիքոր»-ին ուղարկում են քաղաք, այս քա-
ղաքը, բուրժուական այս պրոտելն անիրավ աշխարհ
է անվանում: Գիքորի մայրը: Այդ անիրավ աշխարհում
իշխում է Բակավ Արտեմի գրետատուրան: 5 տարի
անվարձ պետք է աշխատի Գիքորը:

Չնայած Համբոն այս պայմանները գիտի,

այլուամենակի նո պրում է իր վորդուն իր հայտ-
նի նամակը ։ Ես կիրաքաջութ «քորդան» պետք է
հորը փող ողարկի, վոր նո հարկերը ոտ և և վեր-
գալեն, այս անիրամ աշխարհի զառնում է Գիքորի
գերեզմանառունք, ինչպես Ազագյանի և Մոսինի զանգառ-
ի մեջ, այնպես եւ այստեղ, աշխատավոր գյուղացին
քաղաքում գտնում է կորուստ։

Գալով «Գիքոր» պատմվածքի գեղարվեստական
արժեքին պետք է ասենք, վոր Թումանյանի արվեստն
այս պատմվածքի մեջ տորել է իր հազբանակը։ Այս-
տեղ ամենից առաջ փայլում է Թումանյանի տիպա-
կան արվեստը։ Բոլոր գործոց անձերը հանդես են
բերված վերին աստիճանի կենդանի կերպով։ Այստեղ
ամեն մեկը խոսում է իր հասուն չեղպատ։ Թուման-
յանը մի նամակի մեջ ասում է, թե յես դրամա-
շնմ գրել, բայց յես դրամատորդ եմ։ Յեվ նրա դրա-
մատորդ լինելն ավելի շուտ յերեքում է այս գործի
մեջ։ Դիրլոցների արվեստը Թումանյանն այստեղ այն-
պես է սրբել, վոր գործը զատ հեղտությամբ դրա-
մացի յե վերածվում և, զարմանացի շե, վոր սա
մեր պատահի հանդիսատեսների թատրոնի զարդերից
մեկն եւ։

Հետո առանձնապես պետք է շեշտել Համբո-
րի նամակը, վորը Տողովրդական բանաստեղծու-
թյան մի նմուշ է։ Յերբեմն մտածում ես, թե
սա վոչ թե Թումանյանի գրածն է, այլ վորեվէ իրա-
կան գյուղացու գրած նամակ եւ և վորը նա վերց-

14
ուն և գրել է իր գրվածքի մեջ։
Թուժանյանի ստիլիզացիայի կարողությունն այս
համակի մեջ հանել է իր գազաթեակեարի։

Եաւ բնորոշ և նույն բազավ ելուտեար տան գրչ-
ւերի կողքին դեղիի տիպարը։ Թուժանյանը համակրա-
կան վերաբերժութե ունի դեղի այս պատճեր և պոչ
է տալիս միաժամանակ, վոր բուրժուական իրավակարգի
մեջ կան նաև խոհմանքով բարդիկ, վորոնք համա-
կրանքով են վերաբերիսում դեպի գյուղացու մողբերգու-
թունը թշվառությունները։

Մենք նոր ասացինք, վոր Թուժանյանը հանդես է
գալիս, վորպես «լեզվի սանձահարող»։ «Գիւռ»-ը
նայ լեզվի մի որինակելի նմուշ է այն տեսակետից,
վոր այստեղ խոսքի կարծությունը, վորը պահանջում
է Պուշկինը, հասցած է իր բարձրությանը։ Կոչ
միայն կարծությունը, այլև Պուշկինի յերկրորդ և յեր-
րրդ պահանջը - ճշտությունը և պարզությունը նոյնպես
այստեղ կիրառված են, բայց այդ պարզությունը շի-
գուեհկացնում Թուժանյանի վոճը։ Անպայման նա իր
ընթերցողին մտածել է տալիս և ամեն բան շի ձամու
և բերանը դնում։ Նա թույլ է տալիս, վոր ընթերցողն
ել իր հետ մտածի։ Որինակ, յեթե վերցնենք այն տո-
ղերը, վորտեղ ասում ե։ «Մի ախոր առավոտ, մի
ուրախ առավոտ ...»։ Ինչու համար եր այդ առավոտը
տիպուր, վորով հետեւ բայրախան գրկից պոկվում եր մի
յերեխա, գնում դեպի ուտարություն, իսկ ինչու հա-
մար եր այդ առավոտն ուրախ, վորով հետեւ այդ ազ-

Քառ մարդիկ սպառելիք ունեցին, վոր Գիրորը
կզնա, իսոզ կաշխատի և իրենց ճանր տնտեսական
գործությունը կդրկվի: Եաւ կարճ, շատ ճիշտ և
պարզ, և միաձամանակ ընթերցողին մասմաս ավոց:

Նոյնը պետք է ասն և այն մասին, վոր Թուման-
յանն այստեղ հանգեն է գալիս վորպես Մի մեջ հո-
գեբան, մանուկների հոգեբանությունը՝ նա ավել և
մանուկին հասուն լեզվով:

«Գիրքորուսի գործադրը, վոր կանչում է.
«ալի, ալի Շե, Գիրու», սա չույս է տալիս, թե
ինչպես Թումանյանը գիտեր լսել մանուկների լեզուն
նաև մանուկների բերանից: Այդ մանկական լեզուն
Թումանյանը տվել է նաև իր մանուկների համար
գրված վոտանավորներից մեջ, վորտեղ նրա մանկա-
կան պոեսիայի վարդապումը գնացել է Դավարու Աղա-
յանի բաց արած ճանապարհով: Այս պոեսիայի մեջ
շատ աշքի տե ընկնում Թումանյանի այլուրիկմը,
մեր նողովրդից վերսրած առաջը մանուկներին մատ-
շելի ճեղով տալը և արած միջոցով մարդասիրության,
այլասիրության վզայմունքը նրանց մեջ կարգացնելը:
Որինակ. « Մի լինիր ուրազի պես՝ միշտ դեպի քեզ,

միշտ դեպի քեզ,

Այլ յնոիր ազոյի պես՝ մին դեպի քեզ,

մին դեպի մեզ»:

Նոյնպես հատկապես մանկական խաղնորի մեջ Թու-
մանյանը տալիս է մի բարձր իդեա: Որինակ.

« Մանուկն ու Պուրը» . այստեղ շատ բնորոշ է զրի

պատասխանը, վոր տալիս է մանուկին. « բավական ե, յես գնում եմ» և գնում ե գյուղացու աշխատանքը արդասավորելու, զաղացին և բաստակին ջուր տալու և այլն:

Թումանյանի գեղարվեստական արձակի մեջ աշքի յե ընկնում նաև նրա յերգիծաբանական տաղանքը, մինչդեռ թումանյանը խիստ աններող ե և, կարելի յե ասել՝ թունավոր ծիծաղ ե բանեցնում բորժուակի-այի և ցարիկմի դեմ, գյուղական մասսայի վորոշ յերությունները թումանյանը ծաղրութ ե և ամեն կերպ աշխատում ե այս թերությունն արմատախիլ անել, բայց այս ծաղրը համեմատաբար մեղմ ծաղր ե, յու-մորով ծաղր: Յեզ հենց այս վերաբերմունքը յերե-փում ե նրա գրած վերնագրից « Անքոնք»:

Սա չույց ե տալիս, վոր այստեղ թումանյանը բանեցնում է, յեթե կարելի յե այսպես ասել, ընկերական շարժի գեղարվեստական միջոցները: Մինչդեռ « Քաջ նազարի » միջոցով նա չույց ե տալիս այն ան-հեթե՛թ հասարակությունը, վորը ձնում ե նաև անհե-թե՛թ հերոսներ՝ « Քարաբաղնիսի » և « Բարիկենդա-նի » մեջ, ինչպես և Սուրացանն ե արել, ծաղրել ե տգիտությունն ու միամտությունը:

Մենք վերեկ տեսանք, վոր թումանյանն եպոսի մասին այն կարծիքն ե հայտնել, վոր դա վոշ թե մի ժողովրդի ստեղծակործություն, այլ ժողովրդների համաշխատակցություն: Նոյն բանը յերեփում ե նաև թումանյանի գեղարվեստական արձակի մեջ: Որի-նսկ « Բարիկենդանը »: « Բարիկենդանի » նյութը մը-

շակվուի և նու գերմանական գրականության մեջ և
Տշակողն է մշակել մի տականքավոր գրող՝ Հաննա Զախարյ:
Մի վորդեվացրի իր առան գառնը կանգնած՝ առանում է,
Վոր մի բարեկառական արհեստավորի աշակերտ, անց-
նում է պազուղով. նրան հարցնում է՝ վորտեղից ես
դալիս, նա պատասխանում է ոռ Պարի, կինը հաս-
կանում է Պարագան (գրախա) և միամտորեն նրան է
հանձնում իր մեռած ամուսնու շորերը. Շարունակու-
թյունը նման է թումանցանի պատմածին:

Այդ նոյն ժողովրդական պրույը, ինչպես տես-
նում է մի, Թումանյանն էլ է մշակել և հումանյանի
մոտ առ կապված է մեր ժողովրդական վորոշ հաս-
կացողությունների հետ՝ բարիկենդանի հետ, բարի-
կենդանի վորոշ սովորությունների հետ, յաղի, բրձնի
և այլն:

Թումանյանի գեղարվեստական արձակի մի նշա-
նակոր հատվածը կազմում են նրա հեքիաթները:
Իուրծուական քննադատության մեջ այն կարծիքը
կա Թումանյանի հեքիաթների մասին, վոր իբր թե
հումանյանն իր հեքիաթների մեջ հանդիս է գալիք
իբրև մի հետազնմ գրող: Այս կարծիքը սխալ է:
Թումանյանն իր հեքիաթների մեջ ել հանդիս է զա-
լիս վորպես մի առաջավոր գեմուկրատ գրող և
նրա հեքիաթները կապված են նրա վողջ ստեղ-
ճագործության հետ ամուր կերպով:

Չնայած վոր հեքիաթի մեջ արձարձված յերե-
պույթները հրաշապատում են, բայց և այնպէս,

այստեղ եւ ոճաշխառութեն նա հանգես է բերում
Ժողովրդայնության և դժմոկրատական հետանկարներու
նա հեքիաթների մեջ ծաղցում է իշխաններին, թա-
գավորներին և առհասարակ միապետության գաղա-
փարը և մեծարում ժողովրդին ու նրա աշխատանքը:
Ինչպես Թումանյանի մյուս զորքերում, այնպես ել
այստեղ գրվածքի հիմնական մեջը սոցիալական
բողոքն է շարիզմի դեմ և բորժուապիսյի շահա-
գործման դեմ, նրա իդեալն է՝ աշխատանքի թագա-
վորությունը: Նրա այնպիսի հեքիաթը, ինչպիսին ե՝
«Կոսկու կարասը», «Տերն ու Ֆառան», «Անձը»,
«Գառնիկ ախպերը», «Պողոս-Պետրոս», «Սուտա-
սանը», «Անհաղթ աքլորը» և այլն: Պարզ ցոյց են
տալիս, վոր հեքիաթագիր Թումանյանին ինչ հասարա-
կական - գաղաքական իդեալներ ունի, ովքերը են
Նրա բարեկամները և ում ե նա համարում ժողո-
վրդի թշնամիներ. որինակ՝ «Անհաղթ աքլոր»-ի մեջ
նա պարզապես ցոյց է տալիս, վոր թագավորը գող-
ե, իսկ «Անձ»-ի մեջ, նա յերգում է հասարակու-
թյան համար ոգտակար գաղաքարներ, լավություն,
մարդասիրություն, յեղբայրասիրություն և այլն:

Թումանյանի հեքիաթների մեջ յերեվում ե
նաև Նրա սոցիալական ուսուցիան, այդ կողմից
շատ հետաքրքրական ե մի վուգահեռագիւն
անցկացնել Մաքսիմ Գորկու և Թումանյանի միջև:
Մաքսիմ Գորկին մանկական և պատանեկան տա-
րիներին հեքիաթներ և պատմվածքներ լսելով, հա-

մովզած ե յեղել, վոր կա խելոք և խիպախ մեկը,
վորը կյանքի մեջ ըմբոստանում ե աստօռ և թա-
գավորների դեմ, և Մաքսիմ Գորկին այս մեկը հա-
մարում է ժողովուրդը՝ «խիպախ և խելոք» մեկը:

Մաքսիմ Գորկին իր «Մանկություն» գրվածքի
մեջ պատմում է, վոր սոցիալական արգարագատության
վգացումն իր մեջ առաջ ե յեկել տատի հեքիաթ-
ների աշդեցությամբ: Յեզ իսկապես, ժողովուրդը,
վորը հեքիաթների ամենամեջ ստեղծողն ե, հեքի-
աթների մեջ դնում է իր դարավոր յերազները:
Ինչ ե յերազել ժողովուրդը՝ թոշող գորդեր, անմա-
հական ջուր, անշեղ հուր: Այս բոլորը չույս տալու
համար, ժողովուրդը նույնիսկ իր յերազների մեջ
մտցնում է ռեալիզմ: Սրա համար սիսալ ե բուրժու-
ական տեսաբաններից վոմանց կարծիքը և մեզ
մոտ ժողովրդի թշնամիներից մեկի հայտնած այն
կարծիքը, թե թուժանյանն իր հեքիաթների մեջ
մնում է ռեակցիոն և ռոմանտիկ: Հնդհակառակը,
թուժանյանը իր հեքիաթների մեջ տվել է ժողո-
վրդական պրոգրեսիվ յերազները պատկերապել և
ռեալիստորեն:

Ինչպես վոր թուժանյանն իր պոեմաների մեջ
տվել ե անմահ տիպեր, այնպես ել իր գեղարվես-
տական արձակի մեջ ե կերտել անմահ տիպեր,
վորոնք բնորոշում են այն դարաշրջանը, վորիկ
վոր վերցված եյին այդ տիպերը: Դեռք ե ասենք,
վոր «Գիքոր» պատմվածքի հիմնական հերոսնե-

ը մնում են իրենց դարաշրջանի գեղարվեստական
խոտակումը . Գիքորր, դեղին, Համբոն, Առյնիսկ բա-
յասական տիպերը՝ բազավ Արտեմը, երա Կինը- Եատոն:

VI

Ինչպես մանկական բանաստեղծության մէջ, այն-
ուես ել, պոեմական ժանրում, հեթիաթների մէջ ,
նույնպես և թարգմանության մէջ , թումանյանը գնա-
ցել է Պապարոս Աղայանի բաց արած և անապար-
հով : Անպայման իբրև թարգմանիչ , թումանյանն
ստեղծործել է Պապարոս Աղայանի գրական ժառան-
գությունը , հատկապես՝ Պուշկինի «Կոսի Զկնիկա-
թարգմանությունը :

Ինչպիսի՝ առանձնահատկություն ունի թումանյանն
իբրև թարգմանիչ . ամենից առաջ պետք է նկատել ,
վոր նա բառի բուն իմաստով վոչ այնքան թարգմա-
նիչ է , վորքան լեզվաշինարար , այսինքն՝ ոտար նյութե-
րը նրա ձեռքի տակ դառնում են կուտ ինքնուրույն
ստեղծագործություններ : Յերբ իրար հետեւից կարգում
ենք թումանյանի ինքնուրույն ստեղծագործություն-
ները և ապա՝ թարգմանությունները , տեսնում ենք
մի զարմանալի ներդաշնակություն : Թարգմանությու-
նը շատ հարազատ է նրա ստեղծագործության :
Հարազատ է նաև՝ բովանդակության իմաստով : Նրա
թարգմանությունները , ինչպես և ինքնուրույն ստեղ-
ծագործությունները , փայլում են եպիքականությամբ ,

ծողովրդայնությամբ և պարզությամբ։ Նա ունի կոնկրետ սյուժե և գըոթող անձերը կենդանի մարդիկ են։

Իովանդակության հետ արժե նշել թումանյանի լեզվի առանձնահատկությունները, ինչպես Հովհաննես Հովհաննիսյանը, այնպես և Հովհաննես թումանյանը, շատ լավ գիտեր հայոց լեզվի։ բաղկացուցիչ տարրերը՝ գրաբար, բարբառեր, գրականը, նաև մասսամբ ուսար լեզուներ։ Նա իր հովվաճների մեջ հայտնել ե, վոր ինքը հակառակ ե ավելորդ թարգմանությունների։ Իոլոր լեզուների մեջ ընդունված բառերը հարկավոր չե թարգմանել. որինակ՝ նա Յաղրում ե, յերբ ֆրակը թարգմանում են՝ պողապատ կամ կոտլետը՝ կողիք

Միաժամանակ, նա հակառակ եր արհեստական, փրուն, ճոռոմ լեզվական արտահայտություններին։ Նա բոլորովին չի հավանում Գամառ Քաթիպասի լեզուն և խիստ հավանում է Աթովյանի, Աղայանի, Գարեգին Մրկանձտյանի լեզուն՝ «Համով Հոտով»-ի, «Գրու-Բրուի», «Թորոս Աղօրոր» հեղինակի լեզուն։

Թումանյանի վերին աստիճանի խստապահանջ ե թարգմանության նկատմամբ։ Նա գտնում ե, վոր հայ գրականության մեջ առհասարակ լավ թարգմանությունը հազվագյուտ ե։ Եռյնիսկ նա չի հավանում Սաղաթյանի «Դե»-ի թարգմանությունը։ Նա պահանջ է գնում, վորպեսպի թարգմանությունը մրցի բնագրի հետ՝ նրան գերազանցելու համար։ Սա մի պահանջ ե, վորը գնում ելին նայել համաշխարհային նշանավոր բանաստեղծները։

Թումանյանի թարգմանության մեջ պետք է հրատակել յերկու նշանավոր հեղինակների արած թարգմանությունները . այս հեղինակներն են՝ Պուշկինը և Լեռմոնտովը : Նա ինքը Յուրի Վեսելովսկուն գրում է , վոր այս յերկու ռուս հեղինակները նրան շատ ավելի հարապատ են , քան Գամառ Քաթիպան . կամ Շահապիզը : Յեզ այս յերկու հեղինակների ստեղծագործությունների ուսումնասիրությունը նրան հնարավորություն են տվել այս յերկու ռուս կասիրկներին շատ շավ ըմբռնել և շատ շավ վերարտադրել հայերեն : Եատ հետաքրքրական է իմանալ , թե նա ինչպես է հասկանում և թարգմանում Պուշկինին : Ամենից առաջ պետք է նկատել , վոր Թումանյանը բառացի թարգմանություն չի անում և , յեթ Պուշկինի տեքստը համեմատենք Թումանյանի թարգմանության հետ , կտեսնենք , վոր յերբեմն վորոշ բառեր չի թարգմանել , կամ այս բառերի փոխարեն դրել ե այնպիսի բառնր , վորոնք չույց են տալիս , թե նա Պուշկինին ինչպես է ըմբռնում և հասկանում :

Բերենք մի որինակ . 1905 թվի հեղափոխության ժամանակ Թումանյանը թարգմանել է Աւեփան Շահումյանի առաջարկությամբ , Պուշկինի մի քառասողը .

« Ասում եմ քեզ և քո գահը

Միահեծան , դաման ցար ,

Յեզ քո , և քո վորդոց մանր

Դիտի տեսնեմ անպատճառ » :

Այս քառյակն իրուն թռուցիկ տպագել է , բայց յերբ

Դաշեմատում ենք Պողկինի տեքստի համայս թարգ-
մանաթարթը, տևածութ ենք, վոր պողկինի մոտ
աշարախներության բառը թուժանյանց դարձրելու
և անշատեառուա: Յեզ մյուս գետաքառուած ել նա, յեր-
թին Պողկինին պահպանուած է, նյութը՝ տեղայնա-
ցնուած է: Արքանակ, մեր քենագուատական գրակա-
նության մեջ մի յերկու պատահին բան նկատվել
է. վերցնենք Պողկինի «Ձրա՞նդար», ԵԸԸՆՅԱՏԱ
բառը, թարգմանելու և - շան լակունները: «Ձմրան
իրիկունա վոտանավորի մեջ դայակը, Պողկինի
վոտանավորում», նատաճ է պատահանի առաջ,
իսկ թուժանյանի թարգմանության մեջ՝ պատի
տակ, վորը շատ ավելի քնական է հայ գեղջուկի
տեսակենում, վորովհետեւ նա, հայ գեղջուկը, շատ
ավելի պատի տակ է նատաճ լինում, և իր Թորմո-
քը յերգում է պատի տակ: Նրա Պողկինից արած
թարգմանություններից պետք է հիշատակել «Ուեզի
յերգը», վորը մեր գրականության նվաճումներից
մեկն է: Պատմական կողորիտը, պատմական սպաս-
ություն այսուհեղ վերին աստիճանի հեջու է նա
պատկերապարթը: Այս թարգմանություններն են, վո-
րովից մասին առում են, թե չպիտես՝ բնագիրն է
լավ, թե թարգմանությունը:

Գալու հերմոնուսկի ստեղծագործություններ-
ից արած թարգմանություններին, պետք է ասենք,
վոր Թուժանյանը զատ է սիրել Լեռմոնտովին և
վոր Միայն սիրել է թարգմանությունների իմաստով,

այլև իր ստուգագործությունների վարչ մասն աշ-
խատել ե տաջ լեռն առողջակ շնչով : Հազոր է հեր-
ժոնտովի «Մօթիրի» թարգմանությունը : Յեկ միան-
գամայն սխալ ենք ամարում հետոն Աանվելյա-
նի այն հարթիքը, ոե «Մօթիրին» բնագրի վոգին
չի տալիս :

Ընդհակառակը թումանյանը վոչ միայն «Մօթիրի»
վոգին ե տվել, այլև «Մօթիրին» նրան վոգեվորել ե՝
ինքնուրույն ստեղծագործությունների համար : Թուման-
յանը գրել է «Մերժված Որենք» մի պոեմ, վորն
անպայման «Մօթիրի»-ի շնչով ե գրված : Կյստեղ արե-
զան սիրահարվում ե և թողնում վանքը : Հետագա-
յում, նա խստապահանջ ե լինում իր այդ յերկի վե-
բարերյալ և ձողովաճուիկ դուրս ե հանում : Թուման-
յանը ինչպես և Մաքսիմ Գորկին, վերին աստիճա-
նի խստապահանջ են իրենց յերկերի նկատմամբ,
մանավանդ իրենց սկզբնական գործերի նկատմամբ :

Առանձնապես պետք է հիշատակել նույն Թու-
մանյանի թարգմանությունները Շիլերի և Բայրոն-
իկ : Շիլերիկ թարգմանել ե «Կալանավորը», իսկ
Բայրոնիկ «Չարլի Հարոյլդ»-ի նախնրդանքը, վորը
նա տպել ե տվել «Հորիզոն» աշմանախի մեջ, Փի-
լիպոս Կարդապարյանի հրատարակությամբ :

Թումանյանն իր գրական ստեղծագործական
առաջին շրջանում առանձին հակում ե տաձել դեսի
Բայրոնը : Հայտնի նորվեգացի գրող՝ Գեորգ Բինգեն
ասել ե. «Ով վոր իր միջավայրից ոգուհ է, նա դի-

Մու և Բայրոնին:

Թումանյանը չոչ Մրացե թարգմանել է Բայրոնին, այլև իր թեքնուրույն Մի շարք վուանավորների մեջ պահպան է առվիս բայրոնյան շունչը:

ԱՅ

Այժմ անցնենք Թումանյանի կրած և թողած գրական ազգեցության խնդրին: Մենք մի շարք անգամ արդեն հրշատակեցինք Աղայանի անունը: Ծիրվանդագենն իր «Կյանքի բովիս» մեմուարների մեջ հայտնում են այն կարծիքը, վոր Թումանյանը իր ստեղծագործական քայլերն արել են Ղազարոս Աղայանի ռժանդակությամբ: Աղայանը յեղել են նրա ուսուցիչը: Ծիրվանդագեն Թումանյանին՝ անվանում են Աղայանի գրական սանը: Վոչ միայն գրական վարպետության խնդիրներում, վոչ միայն գրական ժանրերի ընդարձակման բնագավառում, այլև մի շարք հասարակական-քաղաքական խնդիրներում, Թումանյանը կողմնորոշվել են և գնացել Աղայանի բաց արաձնանապարհով, որինակ՝ թավառների, կալվաճատեների խնդիրը, Աղայանը «Յերկու քույր» վեպիկի մեջ արտահայտում է իր ատելությունը ու զայրութը թափառների դեմ: Նոյն զայրութն է հայտնում թափառների դեմ նաև «Հառաջանք» պոեմայի մեջ Թումանյանը:

Թումանյանը շատ է հավանում Աղայանի, լեզ-

զական կուլտուրան . Նա Գայառ Քաջիկայի տերերի մեջ
և Մեր արտերի շունչը չի առնում : Անպայման Աղայա-
նի Հեղինք Թումանյանը համույց և ստանօս, մո-
նականդ Մանկական բանաստեղծության մեջ, Աղա-
յանը Թումանյանը գեղարվեստական տիպարն է յե-
ցել : Չի կարելի ասել , վոր նա Աղայանին հետեւէլ
և կամ պատճենել : Թումանյանը շատ խոշոր տա-
ղանդ և և վերին աստիճանի ինքնուրույն հեղինակ,
և Աղայանիկ սովորել է և իր սեփական ստեղծագոր-
ծությունը ավել : Հենց ինքը՝ Թումանյանն այսպէս
էլ հասկանում և ազդեցությունը . Նա ասում է .
« ազդեցությունն այն սանրուցքն է , վորով սկսնա-
կը բարձրանում է դեպք ինքնուրույնություն »

Ի՞նչ նմանություն կա Աղայանի և Թումանյանի
մանկական բանաստեղծությունների մեջ : Նախ՝ թե
Աղայանը , և թե Թումանյանը Տանուելին կապում
են բնության և աշխատանքի հետ : « Բախտի
սպասող Հանեսի » մեջ Թումանյանը հրահանդել է
աշխատել և վոր բախտի սպասել : « Գալ հավի »
պատմության մեջ Թումանյանն ուսուցանում է .
վոր ով չի աշխատի , նա չի ուսիր : Հետո շատ կար-
վոր է նաև Թումանյանի մանկական լեզուն . առա-
ջին անգամ թիւր . գրականության մեջ Աղայանն էր .
վոր մանուկին խուեցրեց մանկական լեզուն : Ման-
կական լեզուի հրանալի նմուշներ ավել է նաև Թու-
մանյանը : Թումանյանը մանկական գրականության
միջոցով կազմում է ճրիակերության դեմ : Բայց ի բար-

կե, Բաժանակի ամենից մեծ ուսուցիչը մնաւ և
մեր ժողովուրդը : Աեւ իր սկսրծական գործերի
մեջ Թումանյանը զույ և տվել, վոր հայ նոր գրա-
կանության համար պետք է աղբյուր Յառայի, զո-
գեվորության պահակ Յառայի մեր ժողովրդական
պրականությունը : Այս մասին նա խոսել է իր նը-
շանավոր «Յանապարհորդություն» հոդված «աշ-
խատության մեջ» :

Երրորդականութեան պատմում է իր «Պատերազմի
վայրից» և հիշողությունների մեջ, վոր Թումանյանը
նույնիսկ ռազմականում հայ գյուղացիներին իր
զորջն եր Տավաքում և Նրանց զանազան բաներ
պատմել տայիր և վորոշ բաներ անցկացնում իր
հրշատակարանի մեջ :

Մի նոր բան, վոր Թումանյանի մանկական
վոտանավորների մեջ կա, որ աշխատանքի կուտն
ե : «Եերեվ և Կուսր և վոտանավորի մեջ նոյնիսկ
յերկնային լուսատուներին պատերացնում է աշխա-
տանքի պրոցեսի մեջ : Կամ «Մանուկ» ու զորը»՝
վոտանավորի մեջ՝ «Դու վոր՝ սարեն կուգաս, զրիկ,»՝
այնուեց ել խոսում է Ժիր այգեապանի մասին : Այս աշ-
խատանքի կուլոր գտնվում է նաև մեր ժողովրդա-
կան բանաստեղծության մեջ : Խասպինք, վոր Թուման-
յանը հազարում է Սրբանձայանին : Սրբանձայանի
յերկերի մեջ Գոլիերի նյութերը Թումանյանը բա-
կական մեծ շափառ ոգուագործել . իր «Քաջ նազար»-ը
և Սրբանձայանի «Համալ-Հառով»-ի Քուկորային նյու-

թերից և վերպրել : Ինչպես Աղայանի նկատմամբ , այն-
պէս Եւ Տողովրդական ստեղծագործության նկատմամբ ,
Թումանյանը Վոչ թէ կուրորէն նժանվել է , այլ ստեղ-
ծագործել : Նա խկապես հանդիսացել է Տողովրդական
շերդիւ . Վորո կապված է Տողովրդի հետ շատ սերտ
կապով : Յերե անմեռ է Տողովրդով : յեթ անմեռ
է Տողովրդական պոեմիան , անպայման այդ անձանու-
թյունը վերաբերվում է . Նաև մեր Տողովրդական քա-
նակտեղներին : Նա Գոլկուրային նյութերն այնպես է
ստեղծագործել . ինչպես ուսու խոշոր բանաստեղծ՝
Նեկրասովը : Նա Տողովրդից առաջ նյութը յենթարկել է
իր գեղարվեստական նպատակներին . իր հիմնական
իրեային : Արա հետ միասին , մշակում է ինքնույրույն
արվեստ՝ թէ տաղաղափության , յեզ թէ կոմպուտիս-
այի տէսակենտիկ :

Շատ հետաքրքրական է նկատել , վոր « Մանուկն
ո ջուրը » մշակվել է Նաև մեր միջնադարյան , գրա-
կանության մեջ : « Ջուր գու յոր լեռնն կուգաս ,
իս պառ ջրիկ ու անուշիկ » : Շինուան ել « Մի կա-
լիլ մնջր »-ի պատմությունը . Վարդան Այգեկյուն
առակնելի մնջը կա : Անպայման Տողովրդական նյու-
թը մշակում է Թումանյանն իր ստեղծագործության
պոետիկայով , Խունունելու : իր անհատական ստեղծա-
գործությունը և Տողովրդական ստեղծագործության
պոետիկան : Նա գնում է Տողովրդի բազ արած Հա-
նապարհով և այդ Հանապարհն ուղիղ Հանապարհներ :
Ինչպես քիչ առաջ ասացրեք Նա չի նմանվում ,

պատճենում, և գողովրդի սովորութ իումը ուշիցիցից
պարզություն, նորիքական կրկնություններ, և ողովրդա-
կան խոսուն տակորրաներ, աճականների կիրառութ և այլն:

Թուժանանն իր խոհ խոստովանությամբ ասել է,
վոր-ցն մոտ նմ պղացել իմ արարն ուս յերկու խո-
չոր բանաստեղծներին՝ Պուշկինին և Լերմոնտովին:

Եսացինք, վոր նա խոստովանվել է, վոր Պուշկի-
նին իրեն ամենի հարազատ և պղում, քան Գաման
Քաթրիպային: Պուշկինն իր ստեղծագործության վոր
կողմերով և հրապուրել Թուժանյանին: Թուժանյան-
ին գրավել է այն, վոր Պուշկինի ստեղծագործության
մեջ փայլում են Տողովրդայնությունը, ոճալիութը, դե-
մուրատական հեղափոխական հեռանկարները: Իռու
գրող Կորութնկոցի հետ խոսելով, Թուժանյանը ցույ
ե տալիս, վոր նա սիրում է Պուշկինին հատկապես:
Պուշկինի այն բանաստեղծությունները, վորտեղ Պուշ-
կինո կարողացել ե ստեղծագործել Ժողովրդական
ստեղծագործական բազային հիման վրա:

Վոր միայն բանաստեղծ Պուշկինը, այսև արձա-
կացյալ Պուշկինին իր ստեղծագործությամբ հարազատ է
յեղն, Թուժանյանին: Այս կառաջիկ շատ հետաքրքրական
և համեմատել Պուշկինի Աղանավոր՝ պահապայի հոր-
դություն գեղի Երկրություն, Թուժանյանի՝ ու Լոռու
կատարած հանապարհությունն ու հետ: Այս յերկու
գործերի մեջ հեղինակները ցարիւմին հակադրվում
են և բազանայտ քաղաքական համակրանք նու տա-
ճում դեպի Տողովրդը և Տողովրդական ստեղծագոր-

ձությունը. Թումանյանն իր այս գործի մեջ հարձակվում է հայ նախրոնալիուս գրողների վրա, վորովք հայ զյուղացու ճակատի ամպերը չեն նկատում, այլ յերգում են Մասիսի ամպերը:

Հերմոնուովի մասին Թումանյանը գրել է գիրշապատ Վարդապարյաննեն, թե՝ յես ամրացապես է երմոնովական նմ վոր թե գրությամբ, այլ բնությամբ և այդ հայտնի, խոշոր բանաստեղծի հասարակական թախինը նա իրենց է համարում և այդ թախին բաժանում է համարում իրեն, և Վարդապարյանին ասում են՝ վոր ճիշտ ես ասում, թե՝ յես թախին յերգի եմ:

Հիմնական ազդեցություն Թումանյանը կրուն այդ հեղինակներից: Բայց յեթե հատուկ ուսումնասիրություն կատարենք, Թումանյանի յերկերի մեջ կարելի յե գտնել մի շարք մանրամասնություններ, վորոնք գործ են աճում այս կամ այն հայ և ուսար հեղինակները: Այս նմանությունը կարող է նաև պատահական նմանություն լինել, բայց վերջի վերջու մի քանի տեղեր այս նմանությունը բավականից աշխար յե ընկնամ: Յեթե վերցնենք նրա «Արքամարց» դա նըման է ավատրիակի Նշանավոր գրամատուրա Գրիշպարուի և Ալիքների և սիրո յերգը» պաշտքին: Յերկու ստեղծագործությունների մեջ եւ կռվիարծակ աղջրկները Ֆովի օնդումում են իրենց սրբազնին, յերկու գեղքում եւ լոյսը հանգչում եւ տղաները մեռնում են:

Թումանյանը վորոշ թեվայոր խոսքերուուի, վորոնք մենք գտնում ենք և այլ հեղինակների մեջ: Որինակ՝ Թու-

մանաքը այս խոսքերը, վորե ասում է « Կյանք յերակ է, յերակն ել մի Կյանք»: Ծովալիսի մոտ կա նման արտահայտություն: Հին գերսանական եպոսի մեջ ել մենք տեսնում ենք վոր աշուղին ողարկում են իրու սիրո պատվիրակ և աշուղը կնոջ առաջ գովում է այս կամ այն հերոսին, նույն բանը մենք տեսնում ենք Հովհաննես Թումանյանի « Թմիաբերդի առում »-ի մեջ:

Նույնը պետք է ասել նաև հեքիաթների նկատմամբ: Թումանյանի մի շարք հեքիաթներն իրենց սյուժեյով նման են Գրիմ յեղբայրների հեքիաթներին: Այս նմանությունն իհարկե վոշինչ չի ապացուցում և այս նմանության վրա հենված վաշ մի դրական յակարակացություն չի կարելի անել և ասել, վոր Թումանյանը մոխտ է առել այս կամ այն հեղինակից: Այս նմանության պատճենու ընդհանուր ժողովրդական ստեղծագործման հիմքնել, վորից ոգտվել են նաև ուսուցչերը.

VIII

Այժմ անցնենք կյուրիկ խնդրին: Ինչ ունենք մենք սովորելու թումանյանից և ինչպես պետք է ոգտագործել նրա ժառանգությունը: Ինչ վերաբերվում է Թողած ազդեցությանը, պետք է ասենք, վոր Թումանյանի ազդեցությունը շատ խորեն յեղել մեր գրականության մեջ: Նրա աշունը միշտ դրել են Աբովյանի,

Դռաշխանի, Աղայանի կողքին և աշխատել են Կոչյ տակ,
վոր մեր Ենթաշինարարության բնագավառում, մեր
Ժողովրդական քանաստեղծության մշակման մարզում
առհասարակ այս գրողները շատ բան ունեն ընթեա-
նուր : Յեկ հատկապն պետք է ասել, Ժանրերի հարը-
տությամբ, բավմականությամբ և Ժողովրդական ստեղ-
ծագործության պոետիկայի շատ հաջող գործածությամբ
Թումանյանը մեր գրականության մեջ զեղարվեստա-
կան դաստիարակիլ և ուսուրի և հանդիսացնել : Այս
իմաստով, պետք է ասենք, վոր Վահան Միրաքյանի
«Հայվարի Վարս» թե բովանդակությամբ, թե գեղար-
վեստական մշակումով, թե Ժողովրդական պոետիկայի
կիրառում բավմական հարապատ և Թումանյանի ստեղ-
ծագործությանը : Ինչպես վոր Աղայանը Թումանյանի
առաջ ճանապարհ է բաց արել, այնպես էլ Թուման-
յանը Վահան Միրաքյանի առաջ ճանապարհ հարթել :
«Դրավդրա»-ն գրում է «Անցյալի մեջ արվես-
տագետները պատկանում են աշխատավոր Ժողովրդին,
Նրանց ջանքերը վուր շեն անցել, Նրանք լավագույն
մտքեր են առաջադրել, մտքեր, վորոնք ոգնել են
Ժողովրդին առաջ ընթանալու և սրանով իսկ զանելու
պատագրման ուղիները» :

Թումանյանը պատկանում է հայ անցյալի այն
մեջ արվեստագետների թվին, վորոնք միշտ հոյս են
դրել ապագայի պայծառության վրա : Նա զրել է իր
նշանակոր տողերն այն ձամանակ, յերբ ցարիկմէ
արյունաբռու իշխողի գնրումն եր . «Կամ մի որ, կընկեր

Ներկան վատ շվերը դաժան, Նրա ամենաքնների վրա
կհիմնելի քուազոր ապագան»։ Սա շատ է հիշեցում
Պուշկինի այն թեսչը, վոր նա պետք է թագավորի և
նրա վորդու մահը տեսնի շարաբն գությամբ։

Նշանավոր քրանսիակի գրող Ռիգրոն ասել է
«Յես շատ եմ մտածել ապագայի մասին, նա չի կա-
րող մոռանալ ինձ»։ Նոյնը կարող է ասել և թուման-
յանը, այն թումանյանը, վորը Նալբանդյանից հետո
մեր գենոկրատական ռեալիզմի ամենախոշոր Ներկա-
յակուրիշն է և վորդես այդպիսին, նա ինչպես և
Պուշկինը ուսու գրականության համար, հանդիսանում
էն գրական հանճարեր, վորոնցով պարհենում են
իրենց ժողովուրդները։

«Պրավդա»-Ն Պուշկինի 100-ամյակի առթիվ ասել
է «Այսոր է վոր Պուշկինը դառնում ժողովրդական թանա-
տեղ»։ Վորովհետեւ այսոր մեր ժողովուրդը Պուշկինին կար-
դում է, իսկ այն ժամանակ, յերբ Պուշկինը գրում եր՝ Նրան
շնորհ կարդում»։

Նոյն բանը կարելի յէ ասել թումանյանի մասին,
վոր այսոր թումանյանը վոշ միայն իր յերկերով և ժողովրդա-
կանացն, այլև նրանով, վոր մեր ժողովուրդը նրան կարդում է։

Մեր սկսնակ խորհրդային գրողները ինչ պետք է սո-
վորեն թումանյանից։ Պետք է ոդինակեն թումանյանի ժողո-
վրդայնությունը, պարզությունը։ Այսորվա մեր սկսնակ բա-
նաստեղջը կարող է սովորել Նրա պես արձագանքել իր ժա-
մանակի մեջ խնդիրներին։ Որինակների յէ նաև թումանյանի
ուսալիկմը։ ահա թե ինչը պետք է մենի սկսնակ գրող-

Ների իդեալը:

Այդ իդեալի մասին գաղափար տաշու համար
հիշատակենք Հիջնագարյան հայտնի յերգիւ Յրիկի
խոսքը « Այս բավերին յես նմանի , վոր վորը վոր-
ի վոր հավանի » :



(ln)



A 2228